AZG NEW PDF.qxd 26/03/2010 22:52 Page 1

Ազգ Azg

27 ՄԱՐՏ 2010 ՇԱԲԱԹ 54 (4434)

ISSN: 1829-1651

## «Մոլորակի ժամ»՝ նաեւ Երեւանում

Այսօր, ժամը 20.30-21.30 կանջատվեն Երեւան քաղաքի խորհրդանիշ հանդիսացող շենքերի եւ օբյեկտների արտաքին լուսավորությունն ու էլեկտրաէներգիան, ինչպես նաեւ քաղաքի պողոտաների եւ հիմնական փողոցների լուսավորությունը: Այս մասին մարտի 26-ին հրավիրված մամուլի ասուլիսի ժամանակ ասաց Բնության համաշխարհային հիմնադրամի (WWF) հայաստանյան ներկայացուցիչ **Կարեն Մանվելյանը**՝ ավելացնելով, որ այս կերպ Հայաստանը միանալու է WWF-ի կլիմայի փոփոխությունների դեմ մղվող համաշխարհային ակցիային, որը կոչվում է «Մոլորակի ժամ»:

ՕՐԵՐԻ ՀԵՏ

## Եկեղեցի-հասարակություն այս հակադրությունը մեզ բնավ պետք չէ

**Իսկապես պետք էր խնայվեր մեզ այս առճակատումը: Դրանից ոչ ոք չի կարող շահել, բացի մեր թշնամիներից, խլրդային աշխատանքի լծված աղանդավորներից: Այսինքն՝ վնասը կրելու ենք բոլորս՝ ե՛ւ ազգային մեր եկեղեցին, ե՛ւ հասարակությունը:**

**Անշուշտ, կարիք չկա բացատրելու, որ խոսքը վերաբերում է «Մոսկվա» կինոթատրոնի ամառային դահլիճի փոխարեն եւ նույն տեղում 1923-26 թթ.-ին քանդված-պայթեցված Սբ Պողոս-Պետրոս եկեղեցի կառուցելուն: Ավելի ճիշտ՝ հասարակության մի մասի ընդդիմությանը այդ ծրագրին, գլխավորությամբ ճարտարապետների, որոնց նախաձեռնությամբ սկսված ստորագրահավաքին երեկվա տվյալներով միացել է 23 հազար մարդ:**

**Իսկապես նախանձելի այս ակտիվության պատճառներն ավելի խորը ուսումնասիրության կարիք են զգում, սակայն այժմվանից իսկ կարելի է պնդել, որ դրա ակունքներում հարազատ քաղաքը հետագա փոփոխություններից ու աղճատումներից զերծ պահելու նախանձախնդրությունը չէ միայն: Այստեղ կան, իհարկե, այլ պատճառներ՝ մասնագիտական շահագրգռվածությունից մինչեւ աթեիստական՝ դեռեւս մարտնչող մտածողությունը, ամեն իշխանականի (այդ թվում նաեւ եկեղեցական նվիրապետության) նկատմամբ չկամության դրսեւորումներից մինչեւ սխալ հասկացված ազատախոհությունն ու մամուլի որոշ օրգաններում հասարակական կարծիքը Մայր աթոռի դեմ տրամադրելու՝ արդեն բավական հին նկրտումները, որոնք նոր թափ էին ստացել այն պահից, երբ, 2008 թ. մարտի 1-ի ողբերգության օրը, ընդդիմության առաջնորդ Լ. Տեր-Պետրոսյանը մերժեց ընդունել Ամենայն հայոց կաթողիկոսի այցը, որը գուցե խնայեր մեզ ողբերգության ծանր հետեւանքներից: Դրա ակունքներում է նաեւ այն հակակրանքը, որը առկա է ընչաքաղց որոշ քահանաների, պճնամոլ ու շվայտ որոշ եկեղեցականների, միշտ իշխանավորների հետ դիրքավորվելու պատրաստ կղերականների նկատմամբ:**

**Այլ խոսքով, կինոդահլիճ քանդելու-եկեղեցի կառուցելու շուրջը ծխական մակարդակով լուծվելիք վեճը վեր է ածվել ազգային խնդրի, եկեղեցի-հասարակություն հակադրության, դժվարին կացության մատնելով այն իսկական հավատացյալներին, ինչպես նաեւ Հայ եկեղեցու ազգային դերակատարությանը հավատացող մեր ազգայիններին, որոնց թիվը շատ ավելի ստվար է, հավատացեք: Վերջիններից շատերն են զգում քանդել-կառուցելու անհարմարություններն ու անպատեհությունները, սկսած Թումանյան փողոցի այդ հատվածի շինարարական ու կիրառական անհարմարություններից եւ վերջացրած եկեղեցազուրկ մնացած խոշոր թաղամասերի առաջնահերթություններով: Առավել եւս նրանց տխրեցնում է մեր որոշ եկեղեցականների ագրեսիվ դրսեւորումները վերջին բանավեճերի ընթացքում, մանավանդ երբ մի շարք հոգեւոր հայրեր, իբրեւ թե պաշտպանելու համար եկեղեցու շահերը, արտահայտվում են վերջին նորահարուստ տղերքի նման՝ մեր սեփականությունն է, ինչ կուզենք կանենք: Այնինչ, մեր եկեղեցու ողջ ունեցվածքը նվիրվել է ազգայինների ու ժողովրդի կողմից, հետեւաբար այն պատկանում է ողջ ժողովրդին:**

**Իրերի այս կացության մեջ ամենից ողջամիտ բանը պիտի լիներ անհապաղ սառեցնել վեճը, մորաթորիում հաստատել շինարարական ծրագրի վրա եւ հանդարտորեն մտածել լուծումների մասին: Ի վերջո, չպետք է մոռանալ՝ եկեղեցին հասարակության, հավատացյալների համար է:**

Հ. ԱՎԵՏԻՔՅԱՆ

# Աստանայում հանդիպելու առաջարկ՝ Սարգսյան-Ալիեւ ձեւաչափով



Ղարաբաղյան հակամարտության կարգավորման գործընթացը ԵԱՀԿ Մինսկի խմբի ձեւաչափում ավելի հաճախ վերածվում է ազդեցությունների ցուցադրության՝ նախաձեռնությունների տեսքով: Բնականաբար, այդօրինակ նախաձեռնություններ ավելի հաճախակի են ցուցաբերում Ռուսաստանը, նաեւ՝ Միացյալ Նահանգները:

ԵԱՀԿ ներկայիս գործող նախագահ Ղազախստանը եւս չի ցանկանում հետ մնալ ղարաբաղյան հարցում նախաձեռնող լինելու բնութագրականն ունենալուց:

Դրա վկայությունն էր ոչ միայն ԵԱՀԿ գործող նախագահի, Ղազախստանի արտգործնախարար-պետքարտուղար Կանատ Սաուդաբաեւի՝ փետրվարի 15-17-ը տարածաշրջան այցելության ժամանակ արած հայտարարությունը, թե Ղազախստանը առաջընթաց է ակնկալում, այլեւ երեկ նախորդ հայտարարության տրամաբանական շարունակությունը ներկայացնող խոսքերը:

Մասնավորապես, Սաուդաբաեւը ԱՊՀ երկրների արտգործնախարարների երեկվա հանդիպմանը հայտարարել է, թե որպես ղարաբաղյան հակամարտության կարգավորման միջոցներից մեկը Ղազախստանը պատրաստ է Աստանայում անցկացնել Հայաստանի եւ Ադրբեջանի նախագահների հանդիպում: «Մադրիդյան սկզբունքների հիման վրա հակամարտության խաղաղ կարգավորման շրջանակներում մենք հնարավոր աջակցություն կտրամադրենք ԵԱՀԿ Մինսկի խմբի աշխատանքներին եւ պատրաստ ենք 2010-ին Աստանայում անցկացնել Հայաստանի եւ Ադրբեջանի նախագահների հանդիպում», ասել է ԵԱՀԿ գործող նախագահը:

Երեկ ղարաբաղյան թեման, ի շարս այլ հարցերի, քննարկել են նաեւ Հայաստանի եւ Ռուսաստանի արտգործնախարարները: Մոսկվայում ԱՊՀ երկրների ԱԳ նախարարների հավաքին մասնակցելու համար մեկնած Հայաստանի արտաքին գերատեսչության ղեկավար Էդվարդ Նալբանդյանի հանդիպումը ռուսաստանցի գործընկեր Սերգեյ Լավրովի հետ անցել է անմիջական, բարեկամական մթնոլորտում, իսկ ղարաբաղյան հարցը քննարկվել է ամենայն մանրամասնությամբ:

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

## Հայաստանցիներն ավելի շատ են սկսել ապաստան հայցել

**Մեր թերթը նախավերջին համարում տեղեկացրել էր, որ ՄԱԿ-ի փախստականների գծով գլխավոր հանձնակատար Անտոնիո Գուտիերեսը զեկույց էր հրապարակել, ըստ որի 2009-ին աճել է ադրբեջանցիների թիվը, որոնք ապաստան են հայցում այլ երկրներից: Նույն զեկույցի համաձայն՝ աճել է նաեւ Հայաստանի քաղաքացիների թիվը, որոնք իրենց ապագան տեսնում են արտասահմանում: 2009-ի տվյալներով 6226 հայաստանցիներ ապաստան են խնդրել այլ երկրներից, ընդ որում նրանցից 5963-ը՝ եվրոպական երկրներից, իսկ սրանցից էլ 5858-ը՝ հենց Եվրոմիության երկրներից: «Ազատություն» ռադիոկայանը բերում է նաեւ հայաստանցիների վերաբերյալ վիճակագրությունը՝ առանձին երկրների կտրվածքով: 2009-ի տվյալներով Բելգիայում ապաստան են հայցել 1099 հայաստանցիներ, Ավստրիայում՝ 439, Հոլանդիայում՝ 349, Լեհաստանում՝ 147, Ֆինլանդիայում՝ 11, Կանադայում՝ 18 եւ այլն:**

Հ. Ա.

## Հայաստանցի երեխա է մահացել Մարսելում

**Փետրվարի 3-ին Մարսելի Timone հիվանդանոցում մահացել է քաղցկեղով հիվանդ հայաստանցի 6-ամյա երեխա, որի բուժումն անցկացվում էր հիվանդանոցի ուռուցքաբանության բաժանմունքում: Ֆրանսիական Le Monde թերթը գրում է, որ երեխայի հայրը նրան Մարսել է բերել Հայաստանից՝ հենց բուժման նպատակով, իսկ մահվան պատճառը եղել է քիմիաթերապիայի չափից դուրս բարձր դոզավորումը: Մարսելի հիվանդանոցն արդեն ընդունել է իր մեղքը, որ երեխային, փաստորեն 10 անգամ ավելի բարձր քիմիաթերապիայի դոզա են տվել: Հիվանդանոցը դժբախտ հորը փոխանցել է 10 հազար եվրո՝ երեխային Հայաստան հասցնելու համար: «Իսկ որդու մահից հետո հայրը չի պատրաստվում դատի տալ հիվանդանոցին, նրա միակ նպատակն է որդու դին հասցնել Հայաստան՝ մորը», գրում է ֆրանսիական թերթը:**

## Իսրայելի խորհրդարանը կքննարկի Հայոց ցեղասպանությունը ճանաչող բանաձեւ

Ապրիլին Իսրայելի խորհրդարանը՝ Քնեսեթը, կքննարկի հայկական բանաձեւը: Այս մասին տեղեկացնում է «ԻսՌուս» լրատվական գործակալությունը: Բանաձեւը խորհրդարան է մտել «Մերեց» կուսակցության անդամ Հաիմ Օրոնի նախաձեռնությամբ: Չնայած 90-ականների սկզբից Քնեսեթը պարբերաբար անդրադարձել է հայկական հարցին, սակայն միշտ էլ այն չի արժանացել պատգամավորների հավանությանը: Այս անգամ կան որոշ հանգամանքներ, որոնցից են, անշուշտ, Անկարա-Թել-Ավիվ լարված հարաբերությունները՝ Արեւմուտքից դեպի մուսուլմանական աշխարհ Թուրքիայի շրջադարձի հետեւանքով, բացի սրանից, Հայաստանի եւ Իրանի ռազմավարական համագործակցության մակարդակի մեծացումը, Ադրբեջանի եւ Իսրայելի շփումների ակտիվացումը, ինչպես նաեւ, որը ոչ պակաս կարեւոր է, Հայ առաքելական եկեղեցու ունեցած դերն ու հողակտորները Երուսաղեմում: Այդ հողակտորները գտնվում են հենց Երուսաղեմի կենտրոնում, ուստի պատահական չէ, որ շատ ճարտարապետներ ու վերլուծաբաններ գտնում են, որ «հայերն իրենց ազդեցիկ խոսքն ունենալու են Երուսաղեմի հավանական վերաձեւումների մեջ»:

Անշուշտ, այս ամենը հաշվի է առնելու Իսրայելը հայկական բանաձեւը քննելիս: Գաղտնիք չէ, որ այսօր աշխարհում չկա մի երկիր, որը բավարար հիմքեր ունենա մերժելու Հայոց ցեղասպանությունը, գաղտնիք չէ նաեւ, որ գրեթե բոլոր ընդունած երկրները դա արել են սեփական շահերից ելնելով: Թե ո՞ւր կտանի ցեղասպանություն տեսած Իսրայելին սեփական շահը՝ կտեսնենք ապրիլին:

ՀՈՎԻԿ ԱՖՅԱՆ

## Կառավարական «հոգատարություն» թուրքահայերի հանդեպ

*Պայմանավորված վարչապետ Էրդողանի անփառունակ հայտարարությամբ*

ՀԱԿՈԲ ՉԱՔՐՅԱՆ

Ժողովրդական առածն ասում է՝ չկա չարիք, առանց բարիքի: Չարիքի պարագայում խոսքը Թուրքիայի վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանի BBC-ին տված հարցազրույցի մասին է, որը հրապարակվեց մարտի 16-ին: Հարցազրույցում Էրդողանը հայտարարել է. «Իմ երկրում 170 հազար հայ կա, որից 70 հազարը իմ քաղաքացիներն են: Առայժմ աչքի ենք փակում մնացած 100 հազարին: Ինչ եմ անելու վաղը, եթե հարկ լինի, այս 100 հազարին ասելու եմ. «Ելեք, գնացեք ձեր երկիրը»: Բայց ոչ թե այսօր կամ վաղը...»:

Ինչ վերաբերում է բարիքին, որքան էլ դա հարաբերական լինի, այնուամենայնիվ դրա թվին պետք է դասել Վանա լճի Աղթամար կղզու Սբ Խաչ եկեղեցին ամեն տարի սեպտեմբերի 2-րդ կիրակին մեկ օրով ժամերգության համար բացելը, Թուրքիայում ապօրինի բնակվող հայաստանցի երեխաներին Պոլսո հայկական վարժարաններ հաճախելու իրավունք տրամադրելը, ինչպես նաեւ Սբ Փրկիչ հայկական հիվանդանոցի գործադիր խորհրդի նախագահ Պետրոս Շիրինօղլուի հանդիպումը վարչապետ Էրդողանի հետ, որը երեկ տեղի ունեցավ Անկարայում:

Աղթամարի Սբ Խաչ եկեղեցու մասին մարտի 25-ի համարում տեղեկացրել է «Հյուրիեթը», ըստ որի՝ Վանի նահանգապետը եկեղեցին ժամերգության համար բացելու խնդրանքով 2009-ի դեկտեմբերի 20-ին դիմում է ներկայացրել Թուրքիայի մշակույթի եւ զբոսաշրջության նախարարության մշակութային արժեքների եւ թանգարանների գլխավոր վարչություն, իսկ նախարար Էրթուղրուլ Գյունայը ընդառաջել է դիմումին: Այս տարի սեպտեմբերի 2-րդ կիրակին նույն ամսվա 12-ին է: Ժամերգության ժամն ու տեւողությունը նահանգապետարանն է ճշտելու, մասնակիցների թիվը, թուրքական թերթի վկայությամբ, լինելու է սահմանափակ, որպեսզի չխանգարվի այցելու զբոսաշրջիկների անդորրը:

Տես էջ 2

## «Հայոց ցեղասպանությունը եւ Շոան»

**Մարտի 27-ին, ժամը 19.30-ին Քյոլնի EL-DE-Haus-ում, որտեղ տեղակայված է նացիոնալ-սոցիալիզմի վավերագրության կենտրոնը, Ցյուրիխի համալսարանից դոկտոր Հանս Լուկաս Քիզերը հանդես է գալու «Հայոց ցեղասպանությունը եւ Շոան» թեմայով դասախոսությամբ: Երկու հեղինակներ՝ Քիզերը եւ Շալլերը նույնանուն հրատարակությունն անցյալ տարի հանձնել են հանրության ուշադրությանը:**

**Դասախոսության ավարտին նախատեսված է բանավեճ:**

Ան. Հ.
Գերմանիա

## Ժամացույցի սլաքը՝ մեկ ժամ առաջ

Հայաստանը այս շաբաթ՝ լույս կիրակի գիշերը անցնում է ամառային ժամանակի: Այս կապակցությամբ մարտի 27-ի լույս 28-ի գիշերվա ժամը 2-ին անհրաժեշտ է ժամացույցի սլաքները մեկ ժամ տանել առաջ:

# Զուգահեռներ ղարաբաղյան եւ կիպրոսյան հակամարտությունների միջեւ

«Եվրասիա համագործակցություն» հիմնադրամի Ստամբուլում գործող Գլոբալ քաղաքական միտումների կենտրոնի մասնակցությամբ եւ ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության ֆինանսական աջակցությամբ Երեւանում մեկնարկած հայ-թուրքական փորձագիտական քննարկումների երկրորդ օրվա ընթացքում հայ եւ թուրք վերլուծաբանները քննարկեցին ղարաբաղյան հակամարտության խնդիրը: Համեմատականներ անցկացնելով ղարաբաղյան եւ կիպրոսյան հակամարտությունների միջեւ՝ թուրքական կողմի ներկայացուցիչների տեսակետները, մեղմ ասած, օբյեկտիվ չէին ու հիմնականում ներկայացնում էին ադրբեջանական կողմի տեսանկյունը:

Ներկայացնելով կիպրոսյան հիմնախնդիրն ու զուգահեռներ անցկացնելով ղարաբաղյան հակամարտության միջեւ՝ Սիլիվիա Թիրյակին խոսեց փախստականների, փոխհատուցման խնդիրների մասին՝ նշելով, որ նման խնդիրներ կան նաեւ ղարաբաղյան հակամարտությունում: Նրա խոսքերով՝ ադրբեջանցի փախստականները, որոնք կորցրել են իրենց տունն ու այլ սեփականություն, պետք է ստանան փոխհատուցում:

Լիբանանում Հայաստանի նախկին դեսպան **Վահան Տեր-Ղեւոնդյանը** դիտարկեց, որ թուրք գործընկերները խոսում են Ֆիզուլիի կամ Աղդամի շրջանում ադրբեջանցի փախստականների մասին, սակայն չեն խոսում միայն Բաքվի 300.000 հայերի ճակատագրի մասին, որոնք տեղահանվեցին, սպանվեցին ու դարձան ընչազուրկ: «Կիպրոսի եւ Ղարաբաղի միջեւ համեմատականն այնքան էլ համարժեք չէ, որովհետեւ Կիպրոսի պարագայում կա քիչ թե շատ համագործակցության կարգավիճակ, եւ դրան զուգահեռ է խոսվում փոխհատուցման խնդրի մասին: Մինչդեռ Ղարաբաղի հարցում այս խնդիրները բացակայում են: Թուրքիայում Ղարաբաղի հակամարտության մասին ունեն միայն ադրբեջանական պատկերացումներ, որոնք իրականության հետ որեւէ կապ չունեն: Գործ ունենք ոչ թե գողի հետ, այլ իր տունը պաշտպանողի հետ», պարզաբանեց նա:

Մարդկային զարգացման կենտրոնի ղեկավար **Թեւան Պողոսյանը** նկատում է, որ հենց Թուրքիայում սեփականության խնդրի բարձրացման կապակցությամբ շատ մեծ խնդիր կա: «Խոսում ենք սեփականության մասին, որ ունեին Հյուսիսային Կիպրոսում, խոսում ենք ադրբեջանցի փախստականների սեփականության մասին, սակայն Թուրքիան խնդիրներ է բարձրացնում, երբ Հայոց ցեղասպանության կապակցությամբ կարծիքներ են հայտնվում, որ հայերը կպահանջեն իրենց ունեցվածքը, փոխհատուցում»:

Թեպետ Թուրքիան անընդհատ կրկնում է, որ ղարաբաղյան պատերազմին չի մասնակցել, սակայն Պողոսյանն այլ կարծիք ունի. գուցե թուրք զինվորները խրամատներում չեն եղել, սակայն թուրքական կառավարությունը զենք ու զինամթերք է տրամադրել ադրբեջանական բանակին: «Հանուն Ադրբեջանի փակել է սահմանն ու Հայաստանին դրել շրջափակման մեջ, իսկ շրջափակումը պատերազմական ձեւերից մեկն է»:

«Ռադիկալ»-ի վերլուծաբան **Էրդուլ Գյուլվինը** երկու հակամարտությունների էական տարբերությունը համարում է ժամանակի ընկալումը: «Հայերի համար ղարաբաղյան հակամարտությունը սկսվում է Սումգայիթից, նրանք այդ ժամանակից են գրում Ղարաբաղի պատմությունը, իսկ Ադրբեջանի կամ Թուրքիայի համար այդ պատմությունը սկսվում է 1993-94թ., երբ հայկական կողմը «գրավեց ադրբեջանական տարածքները»: Ադրբեջանական հողում կա հայկական բանակի ներկայությունը: Ինչպես էլ ձեւակերպենք, դա կոչվում է «գրավյալ տարածք»: Ղարաբաղի կապակցությամբ կողմերի միջեւ պայմանավորվածություն չկա, իրավիճակը ոսկրանում է: Պետք չէ նմանությունների եւ տարբերությունների վրա կանգ առնել: Լուծման չափանիշները բոլորի համար մոտավորապես պարզ են: Հողի փոխարեն՝ խաղաղություն: Կիպրոսը հող է տալիս խաղաղության պայմանագիր ստորագրելու դիմաց: Խոսեցիք Բաքվի հայերի մասին, Բաքվի ջարդերի մասին: Տուժած ադրբեջանցիների հետ մեկտեղ կան նաեւ հայ տուժածներ: Եվ այդ խնդիրն էլ պետք է կարգավորվի», ասում է նա՝ հավելելով, որ այս փուլում փոխհատուցման խնդրի մասին խոսելն այնքան էլ իմաստալից չէ: Նա վստահ է, որ քաղաքականությունում աշխատում են երկակի ստանդարտներ, երկու հակամարտությունների դեպքում էլ դրանք կիրառվում են:

ԼՂՀ նախկին արտգործնախարար **Արման Մելիքյանը** թուրք լրագրողի համար պատմական էքսկուրս կատարեց ու հիշեցրեց, թե ով է առաջինը սկսել ուժի կիրառումը: «Ադրբեջանում եղան զանգվածային էթնիկ զտումներ: Ավելի քան 500.000 հայեր տեղահանվեցին, սպանվեցին, դարձան ընչազուրկ: Ադրբեջանն իր ժամանակագրությունը գրեց այն ժամանակ, երբ ունեցավ կորուստներ եւ հանդիպեց դիմադրության»: Մելիքյանը դեմ է «տարածքներ՝ կարգավիճակի դիմաց» ձեւակերպմանը, քանի որ դա էֆեկտիվ չէ: Նա առաջարկում է հիշել պատմությունը, ժամանակագրությունն ու այդ կտրվածքով իրականացնել փոխհատուցում:

**Վահան Տեր-Ղեւոնդյանը** հավելում է, որ կիպրական հարցն ավելի մոտ է հանգուցալուծման, քան ղարաբաղյանը: Նա նկատում է, որ կիպրական հարցը հասել է արդյունքի, որովհետեւ հունական կողմը բանակցել է թուրքականի հետ, մինչդեռ Բաքուն Ստեփանակերտի հետ չի նստում բանակցությունների սեղանի շուրջը:

«Եկեք խրախուսենք Ադրբեջան-Ղարաբաղ բանակցությունները: Միակ ճանապարհը սա է, այլ ճանապարհները տանում են փակուղի»:

ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

# Հայաստանն ու Չեխիան կհամագործակցեն ռազմական ոլորտում

**Պաշտոնական այցով Հայաստանում է Չեխիայի Հանրապետության փոխվարչապետ, պաշտպանության նախարար Մարտին Բարտակի գլխավորած պատվիրակությունը: Պաշտպանության նախարարության վարչական համալիրում երեկ ստորագրվել է ռազմական համագործակցության համաձայնագիր, որով իրավական հիմքերի վրա է դրվել Հայաստանի եւ Չեխիայի**



**համագործակցությունը՝ ռազմական կրթության, ֆիզիկական պատրաստության, փորձագիտական խորհրդատվության, պատմական թանգարանագիտության, խաղաղապահ առաքելության ոլորտներում:**

**«Չեխիան եվրոպական եւ եվրատլանտյան կառույցների լիիրավ եւ ակտիվ անդամ է, համագործակցությունն այս երկրի հետ կրկնակի հնարավորություն է տալիս Հայաստանին զարգացնելու համագործակցությունը ՆԱՏՕ, ԵԱՀԿ եւ ԵՄ շրջանակում», Համաձայնագրի ստորագրումից հետո ասաց ՀՀ պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանը, հավելելով, որ այդ համաձայնագրով նախատեսվում է համագործակցություն ռազմական կրթության, ռազմական բժշկության, խաղաղապահ առաքելության իրականացման ոլորտներում, ինչպես նաեւ փորձագիտական, խորհրդատվական, պատմական թանգարանագիտական հարցերում:**

**Առանձնազրույցից հետո Հայաստանի եւ Չեխիայի պաշտպանության նախարարները միմյանց են նվիրել երկու երկրները խորհրդանշող հուշանվերներ: Չեխիայի փոխվարչապետն իր հերթին նշել է, որ Չեխիան, լինելով ՆԱՏՕ-ի անդամ, պատրաստ է տրամադրել ուսումնական բոլոր պայմանները Հայաստանի զինված ուժերին՝ ուսումնական վարժությունների համար:**

**Չեխիայի պաշտպանության նախարարի գլխավորած պատվիրակությունը հանդիպել է նաեւ Սերժ Սարգսյանի հետ, Ծիծեռնակաբերդում հարգանքի տուրք մատուցել Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին:**

**Ն. Մ.**

# Սոցիալիստական կուսակցությունների համաժողով Երեւանում

**Մարտի 25-26-ը Երեւանում ՀՅԴ նախաձեռնությամբ Երեւանում կայացավ սոցիալիստական կուսակցությունների համաժողով: Աշխարհի տարբեր երկրներից ժամանած քաղաքական գործիչները, վերլուծաբանները, հասարակական գործիչները ներկայացրին ժամանակակից աշխարհում սոցիալիստական գաղափարախոսության տարածման, տարբեր երկրներում այդ սկզբունքների ներկա իրավիճակը, իսկ հայաստանցի գործիչները ներկայացնում էին իրենց տեսակետները, թե որքա՞ն կօժանդակեն սոցիալիստական մոտեցումները, դրանց գլոբալ հեռանկարները Հայաստանի առջեւ ծառացած մարտահրավերներին:**

**Հայաստանի զեկուցողներից աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախկին նախարար Արսեն Համբարձումյանը ներկայացրեց սոցիալական պետության կարեւոր հիմքերը եւ հիշեցրեց, որ մեր երկրի սահմանադրությամբ է ամրագրված, որ Հայաստանը սոցիալական պետություն է: Սպառողների շահերի պաշտպան հասարակական կազմակերպության նախագահը նշեց, որ միայն աղքատության՝ ստվերից ելնելուց, եւ քաղաքացիների վախի մթնոլորտի վերացումից հետո է հնարավոր անցնել քիչ թե շատ սոցիալական պետության: Իսկ ԱԺ պատգամավոր Կարեն Վարդանյանը կարծիք հայտնեց. «Այսօր ունենք անհանգստացնող չափերի մեծ հարաբերությամբ տարբերություն արտահանման եւ ներմուծման միջեւ: Մեր արտահանման ցուցանիշները ամենացածրն են ԱՊՀ երկրներում», նշեց Վարդանյանը՝ հիշեցնելով, որ. «Ներմուծողները թիթեռների նման են, այսօր կան, վաղը չկան»:**

**Համաժողովին իրենց զեկույցները ներկայացրին նաեւ առողջապահության, մշակույթի եւ այլ ոլորտների մասնագետներ, տարբեր քաղաքական գործիչներ:**

Հ. ԱՓՅԱՆ

# Կառավարական «հոգատարություն» թուրքահայերի հանդեպ

*1-ին էջից*

Ինչո՞ւ: Այն պարզ պատճառով, որ եկեղեցին պաշտոնապես գրանցված է իբրեւ հուշարձան-թանգարան, թուրքերեն Աքդամար անվամբ: Թեեւ «Հյուրիեթը» չի նշում, սակայն ենթադրելի է, որ հուշարձան-թանգարանի հանգամանքը Վանի նահանգապետարանին կազատի եկեղեցու խաչը տեղադրելու «տհաճ» պարտավորությունից:

«Հյուրիեթի» այդ նույն համարի վկայությամբ, Թուրքիայում բնակվող հայաստանցիների երեխաներին Պոլսի հայկական վարժարաններում ուսման իրավունքի տրամադրման ուղղությամբ թուրքական կառավարության կատարած աշխատանքների մասին հայոց պատրիարքարանի հոգեւոր խորհրդի նախագահ Արամ արք. Աթեշյանին անձամբ իրազեկել է փոխվարչապետ Բյուլենթ Արընչը: Նա մասնավորապես ասել է. «Թուրքիայում գործում են ազգային փոքրամասնություններին պատկանող դպրոցներ: Քանի որ թույլ ենք տվել դպրոցների գործունեությունը, ուստի պետք է թույլ տանք, որ այդ դպրոցներում սովորելու իրավունք ունենան միեւնույն համայնքի այն երեխաները, որոնց ծնողները եկել են դրսից: Նախարարների խորհրդում այս հարցը ես եմ բարձրացրել, իսկ մեր վարչապետը հավանություն է տվել, ասելով. «Շատ դրական մոտեցում է: Ինչ-ինչ պատճառով Թուրքիայում գտնվող ընտանիքների երեխաների հաճախումը փոքրամասնության վարժարաններ չպետք է որեւէ զգուշավորություն ենթադրի»: Ապա նա կարգադրել է կրթության նախարարին. «Եթե հարկ լինի, կմշակենք նոր կանոնադրություն, որպեսզի ազգային փոքրամասնությունների վարժարաններ հաճախեն ժամանակավորապես Թուրքիայում բնակվող ընտանիքների երեխաները»: Ես կարծում եմ, այս խնդիրը կբարելավվի: Ի դեպ, նախարարների խորհրդի նիստը գումարվել էր նախքան Թուրքիայում ապօրինի բնակվող հայաստանցիների հարցի արծարծումը»:

Վարչապետ Էրդողանի հետ Պոլսո Սբ Փրկիչ հայկական հիվանդանոցի գործադիր խորհրդի նախագահ Շիրինօղլուի հանդիպման մասին էլ տեղեկացրել է CNN-turk-ը: Դա տեղի է ունեցել Շիրինօղլուի խնդրանքով, որն էլ նշել է. «Հարգարժան վարչապետը հարգեց մեր խնդրանքը: Շուրջ 10 օր առաջ Ստամբուլի Դոլմաբահչե պալատում փոխվարչապետ Բյուլենթ Արընչը ընդունել էր ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներին: Նա այնտեղ մեզ իրազեկեց համայնքային կալվածքների առնչությամբ արձանագրված տեղաշարժի մասին: Համաձայն դրա, մենք պետությունից հետ ստացանք 8 կալվածք եւ շատ ուրախացանք: Հետեւաբար վարչապետի հետ մեր հանդիպումը լինելու է երախտագիտության այց»:

Հոդվածը գրելու պահին Պետրոս Շիրինօղլուի այցը ավարտված չէր: Սակայն որեւէ կասկած չկա, որ նա կարժանանա ջերմ ընդունելության: Դրա գրավականը թերեւս հայաստանցիներին երկրից արտաքսելու մասին Էրդողանի անզգուշաբար արած հայտարարությունն է: Թեեւ Աղթամարի Սբ Խաչ եկեղեցին ժամերգության համար բացելու, ինչպես նաեւ հայաստանցիների երեխաների Պոլսո հայկական վարժարաններում ուսուցման մասին խնդիրները նոր չեն, պատրիարքարանը վաղուց էր բարձրացրել եւ անկախ Էրդողանի հայտարարությունից, ըստ երեւույթին նրա կառավարությունը լուծում կտար դրանց, հայտարարությունը, սակայն, արագացրել է լուծումը՝ պայմանավորված հայտարարության առնչությամբ արդարանալու Թուրքիայի վարչապետի նկատառումով:

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԺԹ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
Ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
**www.azg.am**
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221
Հաշվապահութիւն (գովազդ) / հեռ 582960
Լրագրողների սենեակ / հեռ 581841
Համակարգչ. ծառայութիւն / հեռ 582483
*Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն* / հեռ 529353
Համակարգչային շարուածքը «Ազգ» թերթի
Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:
"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐ

# Ո՞վ կաշխուժացնի Հայաստանի տնտեսությունը

Ընդհանուր ճգնաժամը արտասահմանյան ներդնողներին ստիպեց ուրիշ կերպ նայել ԱՊՀ երկրներին: Այդ պետությունների նկատմամբ նրանց հետաքրքրությունը վերջին ժամանակներս նկատելիորեն նվազել է: Հայաստանի վրա դա անդրադարձել է մյուսներից ավելի նշանակալի չափով:

Հայաստանի համար ճգնաժամն արտահայտվեց ՀՆԱ 14,5 տոկոս անկմամբ եւ օտարերկրյա ներդրումների կտրուկ նվազմամբ: Սառեցվեցին կամ առհասարակ անորոշ ժամկետով ընդհատվեցին հանրապետության համար անչափ կարեւոր մի շարք նախագծեր, որոնց մասնակցում են արտասահմանյան ներդնողներ եւ միջազգային կապիտալը:

Այս իրավիճակում Հայաստանի իշխանությունների առջեւ սրությամբ ծառացավ այնպիսի նոր ներդնողներ գտնելու հարցը, որոնք պատրաստ կլինեին շարունակել սկսված նախագծերը եւ երկրում գործի դնելու ներդրումային նոր ծրագրեր: Այսօր ամենքին ակնհայտ է, որ Հայաստանի իրոք որակական տնտեսական ցատկի համար պահանջվում է արտաքին օգնություն. անհրաժեշտ են երկարաժամկետ ներդրումներ, որոնք տվյալ պահին կարող են ապահովել միայն արտաքին ներդնողները:

Նման պայմաններում, ճգնաժամի ամենաթեժ պահին՝ 2009-ի ապրիլին, հանրապետությունը որոշեց անդամակցել Զարգացման եվրասիական բանկին (ԶԵԱԲ), որը դրանից 3 տարի առաջ ստեղծել էին ԱՊՀ տնտեսապես ամենահզոր երկու պետությունները՝ Ռուսաստանը եւ Ղազախստանը՝ հատկապես ԱՊՀ երկրներում ներդրումային խոշոր նախագծերի իրականացման համար:

Զարգացման այդ միջազգային բանկի կանոնադրական կապիտալը կազմում է 1,5 միլիարդ դոլար եւ նրան թույլ է տալիս մասնակցել մասշտաբային նախագծերի ֆինանսավորմանը: Այսօր ԶԵԱԲ-ի ակտիվում արդեն կա 22 ներդրումային նախագիծ, այդ թվում. Ղազախստանում՝ հանքահարստացուցիչ կոմբինատի շինարարություն ֆրոմիտային հանքավայրերի «Վոսխոդ» հանքավայրում, «Զարեչնյե» ուրանի հանքավայրի յուրացում, Էկիբաստուզի ՊՇԷԿ-2-ի վերակառուցում, «Հյուսիսային Ղազախստան-Ակտյուբինսկի մարզ» էլեկտրահաղորդման գծի կառուցում, Կասպից ծովի հյուսիսային՝ ղազախական հատվածում ծովային տրանսպորտի զարգացում, հագահատիկ արտադրողներին գյուղտեխնիկայի մատակարարում եւ ժամանակակից ջերմատների կառուցում, «Կենլիկ» նավթի հանքավայրում ուղեկից գազի օգտահանում, Ռուսաստանում՝ Sukhoi SuperJet 100 ռեգիոնալ մարդատար օդանավերի ստեղծման համաֆինանսավորում, Տիխվինի վագոնաշինական գործարանի շինարարություն, Ուստ-Լուգի ծովային առեւտրական նավահանգստում բեռնահամալիրի կառուցում, Չեչնիայում Արգունի ՋԷԿ-4-ի վերականգնում, Տոմսկի մարզում բնափայտի մանրաթելային սալերի ժամանակակից արտադրության ստեղծում, Տաջիկստանում՝ ժամանակակից մանվածքային ֆաբրիկայի կառուցում:

Հենց Հայաստանի համար պակաս կարեւոր չէ նաեւ այն փաստը, որ ԶԵԱԲ-ի գլխավոր բաժնետերը Ռուսաստանն է, որն ավանդաբար հանրապետության հիմնական ռազմավարական գործընկերն ու ներդնողն է տարիներ շարունակ: ՌԴ տնտեսական զարգացման նախարարության տվյալներով, միայն 2008-ին Հայաստանում Ռուսաստանից կատարված ներդրումների ծավալը կազմել է 880,1 մլն դոլար, այդ թվում անմիջական ներդրումները՝ 714,5 մլն դոլար: Դա կազմում է Հայաստանի տնտեսության ռեալ հատվածում արտասահմանյան ներդրումների ամբողջ ծավալի 69,98 տոկոսը եւ անմիջական ներդրումների 71,4 տոկոսը: 2007 թվականի համեմատությամբ, Ռուսաստանի ներդրումները գրեթե կրկնապատկվել են, անմիջական ներդրումներն աճել են 2,4 անգամ: Ներդրումների ընդհանուր ծավալով, ինչպես նաեւ Հայաստանում 2008-ին կատարված անմիջական ներդրումների մակարդակով Ռուսաստանը զբաղեցնում է 1-ին տեղը: Հայաստանում Ռուսաստանի կապիտալ ներդրումների կուտակված ծավալը արդեն գերազանցել է 1,2 միլիարդ դոլարի սահմանագիծը:

Այսպիսով, դառնալով Զարգացման եվրասիական բանկի լիիրավ մասնակիցը, հանրապետությունը անհրաժեշտ ռեսուրսների նոր ու հուսալի աղբյուր է ստացել ռազմավարական ներդրումային նախագծերի իրականացման համար, այդ թվում՝ ենթակառուցվածքային ճյուղերում:

Հայտնի է, որ բանկն արդեն ձեռնամուխ է եղել հանրապետության կառավարության առաջարկությունների «փաթեթի» ուսումնասիրությանը, ակտիվ աշխատանք է կատարվում մասնավոր բիզնեսի ներկայացրած ներդրումային նախագծերի ուղղությամբ: Մեծ հույսեր կան, որ ռուսաստանյան «արմատների», ներդրումային ներուժի, միջազգային մակարդակի փորձառության, ԱՊՀ երկրների առանձնահատկության իմացության, ֆինանսական աշխարհում հաստատության հեղինակության համադրությունը ԶԵԱԲ-ին թույլ կտա Հայաստանում իրագործել խոշոր կապիտալի ներգրավման հավակնոտ ծրագրեր՝ կենսականորեն կարեւոր ներդրումային նախագծերի ֆինանսավորման համար:

# Վիզաների ստացման համար սահմանվելու է նոր կարգ

Նրանք, ովքեր հաճախ են մեկնում Շենգենյան գոտու երկրներ, չեն խախտում օրենսդրությունը, ժամանակին վերադառնում են, կընդգրկվեն «հույս ներշնչող» քաղաքացիների խմբում, եւ նրանց արտոնագրերի հետագա տրամադրումն ավելի դյուրին կլինի: «Հույս ներշնչող քաղաքացի» որակավորումը Հայաստանում Ֆրանսիայի հյուպատոսինն է, խոստումը՝ եւս: Նման հայտարարության հիմքը «Արտոնագրերի մասին» եվրոհամայնքի նոր օրենսգիրքն է, որն ուժի մեջ է մտնելու այս տարվա ապրիլի 5-ից: Նոր օրենսգրքի համաձայն՝ անձնագրերը պետք է առավելագույնը տասը տարվա վաղեմություն ունենան, երկարաձգված անձնագրերը չեն ընդունվելու: Վերադարձից հետո անձնագրերը դեռեւս 3 ամիս պետք է վավեր լինեն: Անձնագրում եւս 2 ազատ թերթիկ ունենալու պայմանը մնացել է անփոփոխ: Նոր օրենսդրության նպատակը, Ֆրանսիայի հյուպատոսի հավաստմամբ, հատկապես կարճաժամկետ վիզաների կարգավորումն է, որոնք սովորաբար ընտանեկան այցելությունների կամ զբոսաշրջության համար են տրվում: Կարճաժամկետ արտոնագրերը թույլ են տալիս 6 ամսվա կտրվածքով առավելագույնը 90 օր գտնվել Շենգենյան համաձայնագրի երկրների տարածքում: «Այսուհետեւ արտոնագրի համար հայս ներկայացնողը գրավոր պարտավորվում է չխախտել Հայաստան վերադարձի ամսաթվերը: Եթե հայս ներկայացնողը մերժում է ստանում, հյուպատոսությունը պետք է նրան գրավոր ներկայացնի մերժման հիմքերը», ասաց Հայաստանում Ֆրանսիայի հյուպատոս **Ֆրեդերիկ Գրապեն:**

Վիզաների գների եւ տրամադրման ժամկետների փոփոխություն չի ենթադրվում: «Վիզան ընդամենը Շենգենյան տարածք մուտքի իրավունք տրամադրող տարր է: Անգամ այն ձեռք բերելուց եւ տվյալ երկիր հասնելու դեպքում՝ սահմանային իշխանությունները կարող են եւ անգամ պարտավոր են պահանջել որոշակի փաստաթղթեր: Սահմանային իշխանությունները հատկապես մեծ ուշադրություն են դարձնում բժշկական ապահովագրությանը եւ հյուրանոցների ամրագրմանը: Հյուպատոսությունները, իրենց հերթին, ենթարկվում են ինչպես եվրոպական , այնպես էլ ազգային կանոնագրերին: Այդ իսկ պատճառով հյուպատոսությունների կողմից պահանջվող փաստաթղթերը կարող են տարբեր լինել», ասաց Հայաստանում Գերմանիայի հյուպատոս **Ֆրանկ Ռադկեն**: Ֆրանսիայի հյուպատոսն ավելացրեց, որ հաճախ պահանջվող փաստաթղթերի առատության պատճառը եւ նպատակը սահմանային իշխանությունների հետ քաղաքացիներին հնարավոր բարդություններից ազատելն է:

ԱՐԵՎԻԿ ԲԱԴԱԼՅԱՆ

ԱՎՏՈՇՈՒԿԱ

# Hyundai Equus

**Բարձրագույն փիլիսոփայություն է արտահայտված Hyundai Equus-ի յուրաքանչյուր դետալում համաձուլելով ամեն ինչ՝ անիրականից մինչեւ իրականը՝ հարմարավետություն, գեղեցկություն եւ հմայք:**

**Ինքնատիպ ճշգրտությունն ու հետեւողականությունը, որ անվտանգության եւ շքեղության նոր չափորոշիչներ են առաջ բերում, համատեղվել են՝ բավարարելու նույնիսկ ամենաքմահաճ ավտոսիրողի պահանջները: Ներկայացուցչական դասի այս մեքենան մի ամբողջ ներդաշնակություն է ներշնչում, որ միշտ ուղեկցում է ուղեւորին՝ միաժամանակ պահելով նրան տեղեկացված եւ անվտանգ: Կատարելությունը պահանջում է ամենաբարձրակարգ նյութերը, դիզայնն ու հարմարավետությունը: Hyundai Equus-ը շատ գեղեցիկ կերպով միավորում է այս երեքը:**

**1999 թ. Hyundai Motor Company-ին տեղական շուկա թողարկեց Hyundai Equus-ը՝ կատարյալ հայտնագործություն մեքենաների աշխարհում: 2009-ին ծնվեց նոր Hyundai Equus-ը, որում համատեղված է մոդելի անցյալն ու ապագան: Նոր Hyundai Equus-ի ի հայտ գալը պահանջում էր ավելի ճկուն միտք, ավելի շատ ժամանակ, հետազոտություններ եւ փորձ՝ արդեն իսկ լավագույն մեքենան փոփոխելու եւ կատարելագործելու համար: Equus լատիներենից թարգմանաբար նշանակում է «հետոսի ձի» կամ «թեւավոր ձի», այսինքն՝ գերազանցություն, որակ, կատարելություն:**



**Մեքենան կարող եք ձեռք բերել Երեւան- Սեւան մայրուղու աջակողմյան հատվածում գտնվող «Մագաս Ինվեստ» ՓԲԸ ավտոսրահից, որը 2006-ի հունվարից Hyundai Motor Company-ի բացառիկ ներկայացուցիչն է Հայաստանում: Ձոռու տարվա պատմություն ունեցող այս կազմակերպությունն արդեն ունի գնորդների հսկայական բանակ: Սրահի ներսում գործում է ավտոտեխսպասարկում: Այստեղ անցկացվում են ցանկացած տեսակի աշխատանքներ Hyundai մակնիշի բոլոր մեքենաների վերաբերյալ: Տեխսպասարկումը հագեցած է բոլոր տեսակի պահեստամասերով: Իր գործում լավագույններից մեկը լինելով՝ ընկերությունը պարբերաբար բարելավում է հաճախորդներին առաջարկվող պայմանները: Դրանցից են երաշխիքային սպասարկման պայմանները՝ նախկին 2 տարվա կամ 50000 կմ վազքի փոխարեն 2010 թվականից տրամադրվում է մեքենաների երաշխիքային սպասարկում՝ 3 տարի կամ մինչեւ 100 000 կմ վազքի դեպքում:**





**Ճոխ ավտոսրահը, բարեկիրթ սպասարկումը եւ անվերջ ճանապարհին ուղղակի պահանջում են միասին փոխել աշխարհը:**

Ա. Ս.

# Եվրոմիությունը եւ ԱՄՆ-ն կօգնեն Հունաստանին

**Եվրոգոտու բոլոր 16 երկրները հավանություն են տվել Հունաստանին արտակարգ ֆինանսական օգնություն հատկացնելու ծրագրին, որի հեղինակներն են Ֆրանսիան եւ Գերմանիան:**

**Բրյուսելում Եվրոմիության ղեկավարների հանդիպման ժամանակ ընդունված օգնության ճգնաժամային ֆոնդը կազմում է մոտ 22 մլրդ եվրո: Այդ գումարի զգալի մասը կհատկացնեն եվրոգոտու երկրները, սակայն համաձայնագիրը նախատեսում է նաեւ Արժույթի միջազգային հիմնադրամի (ԱՄՀ) «էական մասնակցությունը»:**

**Եվրոգոտու երկրները մինչեւ վերջերս չէին ուզում ԱՄՀ-ին ներգրավել Հունաստանի խնդրի լուծման գործում, նախընտրելով դժվարությունները հաղթահարել համաեվրոպական ուժերով, որպեսզի պահպանվի աշխարհի վստահությունը եվրոյի կայունության նկատմամբ:**

**BBC-ի տվյալներով, Հունաստանի ճգնաժամային տնտեսության վարկավորման մեխանիզմը գործի կդրվի «ծայրահեղ դեպքում»՝ եթե Աթենքը այլեւս չկարողանա վարկեր ստանալ միջազգային շուկաներում:**

**Հունաստանի վարչապետ Գեորգիոս Պապանդրեուն Բրյուսելում ընդունված որոշումը համարում է «ծայրաստիճան գոհացուցիչ»:**

**Գերմանիայի կանցլեր Անգելա Մերկելը ընդգծել է, որ Հունաստանը սնանկ չէ, այլ փորձում է հաղթահարել իր ֆինանսական դժվարությունները եւ դեռ ի վիճակի է փող վաստակել համաշխարհային շուկաներում:**

**Մերկելի խոսքերով, ինքը կձգտի հասնել նրան, որ Եվրոմիությունը ուղղումներ կատարի հիմնարար փաստաթղթերում, որպեսզի ապագայում ընդլայնվեն բյուջետային ճգնաժամերի կանխման հնարավորությունները:**

AZG NEW PDF.qxd 26/03/2010 22:31 Page 1



# Բարոյական արժեքներ

## Կառուցենք եկեղեցին եւ ինքներս մեզ

Վերջին երկու տասնամյակներում Երեւանում ականատես եղանք՝ տարերայնորեն կառուցած, վերակառուցած կամ կցոնած ցածրաճաշակ, շրջապատին հակադրվող, մայթերը զբաղեցնող մեծ ու փոքր կառույցների, զբոսնելու ու հանգստի համար այլեւս անպիտան՝ ժամանցավայրերին ու բնակավայրերին կուլ գնացած երբեմնի զբոսայգիների ու հանգստի գոտիների, կենտրոնի նեղ փողոցները շարունակաբար գերծանրաբեռնող բարձրահարկ շինությունների բետոնային զանգվածների ... Սակայն քաղաքի ճարտարապետա-մշակութային տեսքն ու բնականոն կյանքը խաթարող այս երեւույթների քննադատությունն իր ողջ ծավալով թերեւս այնքան հնչողություն չունեցավ, այնքան քննադատության չարժանացավ, որքան վերջին մի քանի օրերում «Մոսկվա» կինոթատրոնի ամառային դահլիճը քանդելու եւ տեղում նախկինում քանդված եկեղեցու նմանակը վերականգնելու հարցը:

Համաձայնենք, որ հակազդեցությունը նույնչափ ուժգին չէր լինի, եթե ամառային կինոթատրոնը քանդվեր, ասենք՝ սուպերմարկետ կամ «օբյեկտ» կառուցելու նպատակով՝ մանավանդ որ կառուցողի ճանապարհին կանգնելու բավարար համարձակություն էլ չէր լինի: Պատճառը թաքնված է նախորդ դարի յոթ տասնամյակ տեւողությամբ աթեիստական մթնոլորտի տիրապետման մեջ, որն, ըստ իս, շարունակվում է առ օրս: Սրանով են պայմանավորված եկեղեցական տոները պետականորեն նշելու որոշման հասարակական անբարենպաստ արձագանքները, եւ սրանով է բացատրվում, որ կինոթատրոնը եկեղեցու վերածվելու ընդդիմախոսները եկեղեցին նույնացնում են պատմաճարտարապետական կառույցին, իսկ ոմանք նույնիսկ հակադարձում են՝ վաղ քրիստոնյաներին մեղադրելով հեթանոսական տաճարները քանդելու համար: Այսպիսով եւս մեկ անգամ ցավալիորեն հաստատվում է, որ Հայաստանում մեր հասարակությունը փաստորեն դեռեւս չի ընկալում իր իսկ ազգային շահերից բխող այն բացարձակ ճշմարտությունը, որ եկեղեցուն ու քրիստոնեությանն է հայ ժողովուրդը պարտական իր ազգային դիմագծի կերտման ու պահպանման համար, եւ հենց այս կրոնի արժեքային համակարգից դուրս գտնվելն է պատճառը այսօրվա բոլոր մեծուփոքր չարիքների գոյության:

Այնուամենայնիվ, կուզենայի անդրադառնալ լրատվամիջոցներով ծավալված որոշ արդարացի քննադատությունների: Կինոթատրոնի ճարտարապետական եւ մշակութային արժեքը գնահատելուց զերծ մնալով, պետք է խոստովանել, որ այն երեւանցու համար թանկ է, քանի որ դրա առկայությունն իսկ արթնացնում է հաճելի հուշեր դեռեւս մանկությունից հարազատների ու ընկերների հետ այստեղ անցկացրած ժամերի մասին: Երեւի հենց այս իմաստով է առաջին հերթին հուշարձան: Համաձայն եմ նաեւ այն կարծիքին, որ պետք է կենտրոնանալ միայն Երեւանի եւ Էջմիածնի հոգեւոր կառույցների շինարարության վրա, քանի որ մարզերում մենք ունենք տասնյակ ավերված ու ավերվող հիասքանչ եկեղեցիներ: Ամբողջովին ընդունում եմ մի տեսակետ եւս, որ նորանոր եկեղեցիների կառուցմամբ մարդկանց հոգեւոր ու բարոյական էությունը ոչնչով դեպի լուսավորը չի շարժվում, եւ որ Հայաստանում եկեղեցու նվիրապետությունը վերջապես պետք է հասկանա, թե կնունքի ու թաղման ծիսական արարողություններից զատ հոգեւորականությանն այլ, ավելի կարեւոր դերակատարություն է վերապահված: Սակայն ամենեւին չեմ ընդունում այն հետեւությունը, որ նոր եկեղեցիներ կառուցելու անհրաժեշտություն չկա, քանի որ նոր եկեղեցին առնվազն մի նոր աղոթատեղի է, իսկ նրա գոյությունն իսկ մեկ լրացուցիչ անգամ մեզ ստիպում է մտաբերել Աստծո գոյության մասին, ինչի կարիքն այսօր այնքան շատ է զգացվում:

Շատ անգամ է հոգիս խռովվել, երբ տատիցս լսել եմ անցյալ դարասկզբին տվյալ եկեղեցու քանդման մասին նրա վշտի աստիճանի հասնող, բայց ծածուկ արտահայտվող խոր ափսոսանքներն ու հոգոցները: Պատմում էր նույնպես, թե ինչպես է պոկված քարերից մեկը կոտրել քանդման աշխատանքներն իրագործող շինարարի գլուխը, եւ խրատում էր. եկեղեցի քանդողը պետք է իմանա, որ անպատիժ չի մնա: Անշուշտ, լավ կլիներ, որ եկեղեցի քանդողները (միգուցե նաեւ եկեղեցիների կառուցմանն ընդդիմացողնե՞րը) իմանային այդ մասին: Բայց ավելի լավ է՝ թող նմանները քաջ գիտակցեն, որ եկեղեցի վերացնելն անհնարին ու անկարելի մի բան է, ու հենց սկզբից հետ կանգնեն իրենց մտադրությունից:

Ահա թե որն է կայանում քանդված եկեղեցին իր ծագման վայրում վերականգնելու հիմնական անհրաժեշտությունը:

Այնպես որ, եկեք զոհաբերենք ժամանակավոր արժեքները հավերժականին, թող վերակառուցվի եկեղեցին, սակայն՝ բնավ ոչ միայն ճարտարապետական կոթող լինելու հեռանկարով, եւ, իհարկե, հիշենք նաեւ երջանկահիշատակ Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Առաջինի հետեւյալ խոսքերը. «Եկեղեցին այն չէ, ինչ մենք կառուցում ենք, այլ՝ մի իրականություն է, որով ինքներս մեզ ենք կառուցում»:

ԱՇՈՏ ՎԱՎՅԱՆ

## Երկակի ստանդարտները քաղաքում

**Վերջերս շատ արծարծվող նյութերից մեկը Երեւանի «Մոսկվա» կինոթատրոնի ամառային դահլիճի շուրջը բարձրացված աղմուկն է, որը կարծես մի տեսակ ցուցիչ է դարձել՝ մի կողմից քաղաքի տեսքի հանդեպ վերջին տարիներին կատարվող ոտնձգությունների նկատմամբ զգայունության, մյուս կողմից՝ Հայ առաքելական եկեղեցու նկատմամբ վերաբերմունքի:**

**Եթե առաջին տեսակետով առաջնորդվող մարդկանց զգացմունքները միանգամայն կարելի է հասկանալ եւ սատարել, ապա երկրորդ կետում ակնհայտորեն զգացվում է տարբեր հարցեր իրար հետ խառնելու անհասկանալի ցանկություն որոշ մարդկանց խոսքերում եւ գործերում:**

**Նրանց կռվանները հանգում են հիմնականում այն բանին, որ, առաջին, ամառային դահլիճը 60-ականների ճարտարապետական փայլուն նմուշ է, եւ, երկրորդ, կան քաղաքացիներ, ներառյալ ճարտարապետները, ովքեր բարի հիշողություններ ունեն իրենց մանկության կամ երիտասարդության տարիներից՝ կապված այդ կոթողի հետ, որտեղ նրանք կինո են դիտել կամ ներքեւի սրճարանում մտերմիկ զրուցել: Սկսենք երկրորդից: Վատ չի լինի, եթե նման զգացմունքներով այդ կառույցը պաշտպանողները իրենց հաշիվ տան, թե ինչ զգացմունքներ են ունեցել իրենց ավագ սերնդի մարդիկ, հավանաբար նույն ճարտարապետների կամ քաղաքացիների անմիջական հայրերը կամ պապերը, երբ իրենց աչքերի առաջ պայթեցվել ու քանդվել է շատ ավելի կարեւոր մի շինություն՝ եկեղեցի: Ինչո՞ւ իրենց երիտասարդության հետ կապված մշակութային հիշատակները ավելի կարեւոր պիտի համարվեն, քան իրենց իսկ հայրերի հոգեւոր, մշակութային, բարոյական զգացմունքները, որոնք այդպես կոպտորեն ոտնահարվեցին: Միայն ա՞յն բանի համար, որ իրենք կենդանի են, իսկ իրենց հայրերը՝ ոչ: Բայց մի՞թե որդիները պարտավոր չեն հարգել իրենց ծնողների նվիրական զգացմունքները, եթե նույնիսկ պետք լինի հրաժարվել իրենց սեփական, ակնհայտորեն պակաս նվիրական զգացմունքներից (նկատի ունեմ, որ իրենց զգացմունքների օբյեկտը պակաս նվիրական է):**

**Հիմա անդրադառնամ առաջին կռվանին, որ ամառային դահլիճը լուրջ ճարտարապետական կոթող է: Որպես քառասուն տարուց ավելի Երեւանում բնակվող քաղաքացի, ես, ճիշտն ասած, այդ պնդումը բոլորովին էլ անվիճելի չէի համարի: Մեր հարգարժան ճարտարապետները, չգիտես ինչու, միայն իրենց են վերապահում որեւէ կառույցի արժեքը որոշելու բացառիկ իրավունքը, մոռանալով, որ ի տարբերություն երաժշտական, գրական, կերպարվեստի որեւէ գործի, որոնք չհավանելու դեպքում ես կարող եմ չլսել, չկարդալ կամ չդիտել այդ արվեստի գործը, ճարտարապետական կառույցներն ակտիվորեն անընդհատ բոլորիս կյանքի մեջ են, լավը լինեն թե՝ վատը, մենք ամեն օր ստիպված ենք քայլել նրանց կողքով, բնակվել այն տներում, որ կառուցում են մեր ճարտարապետները, հաճախել նրանց ստեղծած մշակույթի օջախները, խանութները եւ այլն, եթե, իհարկե, չենք ուզում թողնել ու գնալ այս քաղաքից: Այնպես որ մենք, որպես ճարտարապետների արտադրանքի ակամա սպառողներ, անկախ մեր կամքից, այդ արտադրանքի ամենաշահախնդիր ու միաժամանակ ամենաօբյեկտիվ գնահատողներն ենք, որովհետեւ մեր քաղաքի ճարտարապետական միջավայրը մեծապես որոշում է մեր կյանքի որակը եւ ամենօրյա տրամադրությունը: Մի՞թե մենք իրավունք չունենք որոշելու մեր կյանքի այդպիսի կարեւոր մասը կազմող օբյեկտի արժեքը:**

**Բայց եկեք ընդունենք, որ ամառային դահլիճը իրոք այդպիսի լուրջ արժեք է: Այդ դեպքում ի՞նչն է խանգարում այդ նույն նախաձեռնող խմբին՝ կազմակերպելու ամառային դահլիճի տեղափոխման նախագիծ դեպի քաղաքի այլ վայր: Եթե որեւէ մեկին այդ միտքը առաջին հայացքից տարօրինակ եւ վիրավորական թվա, անմիջապես նորից հիշեցնեմ, որ ամառային դահլիճը գտնվում է հանցագործ կերպով ոչնչացված 5-րդ դարի եկեղեցու տեղում, «տնվորի» կարգավիճակով: Բացի դրանից, չէ՞ որ որոշ ճարտարապետների նախաձեռնությամբ եւ մյուսների լռելյայն «օրհնությամբ» բազմաթիվ ավելի արժեքավոր ու հին շենքեր թվանշվեցին, քանդվեցին ու հեռացվեցին քաղաքի կենտրոնից՝ իբր հետագայում այլ տեղում կառուցելու համար: Ի՞նչն է խանգարում, որ ամառային դահլիճը այս անգամ ոչ թե «իբր», այլ իսկապես տեղափոխվի քաղաքի որեւէ այլ մաս, դա ավելի տրամաբանական կլինի, քան թե բուն «տանտիրոջը» այլ տեղ տեղափոխելու առաջարկը, ինչը անում են ամառային դահլիճի պաշտպանները: Դահլիճի տեղափոխման դեպքում ե՛ւ կփրկվի ճարտարապետական այդ կոթողը, ե՛ւ կվերականգնվի պատմական, հոգեւոր եւ բարոյական արդարությունը:**

**Վերջում կավելացնեմ մի նկատառում: Այս շինության հետ կապված բոլոր բանավեճերից իմ մտքում մի հարց է ծագում, կուզենայի, որ ամառային դահլիճի կողմնակիցներն իրենց տային, եթե հանկարծ որոշվեր այդ շինության տեղում ոչ թե հայկական եկեղեցի, այլ եւս մի սրճարան կամ գիշերային ակումբ կառուցել (եւ նման բան մինչ այժմ իրականում դանդաղորեն կատարվում էր), արդյոք իրենք նույն ջերմեռանդությամբ կպաշտպանեի՞ն այդ կառույցը:**

ԽԱՉԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ

## Լավ սայլապանի կարիք կա

Զարմանալի եւ ուրախալի երեւույթ է տեղի ունենում հայոց հեռուստատեսության աշխարհում: Ամալյանը, ցախավելը ձեռքն առած, խոստանում է մաքրել իր անգործության հետեւանքով հեռուստատեսության կուտակված աղբը, իսկ Հ1-ն էլ որոշել է առանց աղբը մաքրելու վերակենդանացնել իր ջանքերով, իր ալիքից դուրս շպրտած հայ երգն ու երաժշտությունը: Չանհանգստացնելով միջակությանը եւ «աստղերին»:

Հավատա՞նք:

Եթե հավատանք, ուրեմն այլեւս չեն ցուցադրվի մեր երեխաներին փչացնող ֆիլմերը, բթամիտ կոկտեյլները, դագաղը պերճանքի առարկա դարձրած թաքնված տեսախցիկները, «Արմենիայի» եւ TV-5-ի «32 ատամը» (ինչ լավ է՝ «Շանթը» ժամանակին հրաժարվեց դրանից), մերկ աղջիկների լկտի շքերթը, Ere-1-ը, Հովոյի եւ Վիպոյանի (Արմեն Պետրոսյան) գռեհիկ եւ տափակ կատակները. կարճ ասած, այլեւս չենք տեսնի մարդկանց բթացնելու, ուղեղները լվանալու անտաշ հաղորդումները:

Ինչ վերաբերում է Հ1-ին, սա արդեն կոնկրետ գործի է անցել: Նախ ստեղծել է մի հանձնաժողով (հանկարծ Ամալյանի հանձնաժողովին չնմանվի), որը պետք է վերահսկի հաղորդումների որակը եւ, ամենակարեւորը, հինգերորդ կիրակին է, ինչ «Երգ-երգոց» գեղեցիկ անունով մի հաճելի հաղորդաշար է արձակում, պրոպագանդելով հայ երգը:

Փառք Աստծո, Հանրային հեռուստատեսությունն էլ իմացավ, որ երգերի երգը հայ ժողովրդական երգն է: Չեմ ուզում մանրամասն կանգ առնել, թե ինչ երգեր կատարվեցին, ով մեզ շատ հուզեց, ովքեր փորձում էին մեզ համոզել, որ իրենք էլ կարող են հայ երգը կատարել, բայց տապալվեցին: Եվ ամենակարեւորը, որ վերջապես Հանրայինը բեմ հանեց երգիչների մի փոքրիկ բանակ, որոնք ժամանակին դուրս էին շպրտվել Հանրայինից:

Մի ցանկության մասին չեմ կարող չխոսել: Հայ երգն էլ ավելի լավ կհնչի այն ժամանակ, երբ նրան ձայնակցեն հայ ժողովրդական նվագարանները: Ուրեմն, պետք է նախ ներողություն խնդրեն եւ հետ կանչեն հայ երաժշտության սրբություններից Արամ Մերանգուլյանի անվան ժողգործիքների անսամբլին, որը եւս Հանրայինի կողմից դուրս էր շպրտվել: Կամ ինչպե՞ս կարելի է հայ երգի երեկո անցկացնել առանց «Շանթ»-ի տաղանդավոր, հայության համակրանքը շահած երիտասարդների: Չէ՞ որ նրանք արդեն ապացուցել են իրենց անզուգական լինելը: Այո, «Շանթ»-ը մեր ժողովրդին վերադարձրեց այն, ինչ խլել էին նրանից՝ հայ երգը: Իսկ «Շանթ»-ի հաղթանակներում շատ մեծ ներդրում արեց Սայաթ-Նովայի անվան աշուղական անսամբլը: «Շանթն» էլ իր հերթին օգնեց աշուղական անսամբլին եւ Նորայր Դավթյանի ժողգործիքներին իրենց արժանի տեղը գրավելու բեմում:

Սակայն վախենում եմ, որ այն, ինչ անում է Հ1-ը, ժամանակավոր բնույթ կրի: Ասում են՝ նախագահն է ստիպել Ամալյանին եւ Հանրային հեռուստատեսությանը՝ վերափոխվել: Իսկ մի գործ, որ ստիպելով է լինում, երկար կյանք չի ունենում: Կամ միգուցե Հ1-ին նաեւ ստիպեց տեղից շարժվել անցյալ տարվա փորձագետների խորհուրդը, որը «տհաճ եթերի համար» «մրցանակը» հանձնեց Հ1-ին:

Հենց այդ օրերին թերթերից մեկը գրեց. «Այդպես էլ չիմացանք, թե ովքեր էին փորձագետները»: Ասեմ. փորձագետները մեր ազգի սերուցքն էին, որոնք անցյալ տարի հավաքվելով սկզբում «Կոսմոս», հետո «Անի» հյուրանոցներում, անկախ իրենց կուսակցական պատկանելությունից եւ գրաված դիրքից բռունցքվել էին եւ միահամուռ ջախջախում էին, իրենց բառերով ասած, «գորշ եւ հակազգային հեռուստատեսությանը»: Թող ինձ ներեն, որ չեմ կարող նրանց անունները մեկ առ մեկ նշել, դրա համար թերթի երկու էջն էլ չի բավականացնի, բայց ի՞նչն է շատ գովելի: Այնտեղ շատ էին մարդիկ, որոնց ջուրը մի առվով չի գնում, բայց այդ օրը մոռացել էին բոլոր վիրավորանքները եւ անհաշտությունները, բոլորը մտածում եւ գործում էին միաբան: Օրինակ՝ Գրողների միության նախագահի կողքին նստած էին նրա հիմնական ընդդիմադիրները՝ Ռազմիկ Դավոյանը եւ Աբգար Ափինյանը: Ռեժիսոր Խզմալյանի դիմացը՝ Արմեն Մազմանյանը: Նկարիչների միության նախագահի կողքին՝ մի ուրիշ նկարիչ, Կոմպոզիտորների միության նախագահի...

Այնտեղ էին նաեւ մեր շատ հարգելի հոգեւորականները հայր Կոմիտասի առաջնորդությամբ: Մեր ազգի ծաղկեփնջի անուշահոտ ծաղիկներ՝ ժողովրդական դերասանուհի Վարդուհի Վարդերեսյանը, Ամալյանի նախկին հանձնաժողովի միակ «տղամարդ» անդամ Կարինե Խոդիկյանը, բոլորիս ցավով տառապող Կարինե Դանիելյանը, Մետաքսեն, նշանավոր ակադեմիկոսի նշանավոր կինը՝ Գրետա Ղազարյանը, հայ գրականության ամբիոնի վարիչ Աելիտա Դոլուխանյանը, մեծանուն դերասաններ Ազատ Գասպարյանը, Վոլոդյա Աբաջյանը եւ այլք: Շուրջ հարյուրից ավելի: Այնտեղ էր նույնիսկ հանրապետության նախագահի ներկայացուցիչը, որը նույնպես ելույթ ունեցավ: Այս բոլոր նշանավորներին հրավիրել էին դեռեւս ոչ նշանավոր, հիմա արդեն պատմության մեջ մտած երիտասարդներ Նարեկ Մալյանը եւ Լեւոնը: Շնորհակալություն նրանց: Ասում են, դրանից հետո նախագահը իր մոտ հրավիրեց Ամալյանին: Միգուցե խիստ է խոսել, չգիտեմ, մանրամասն չգրեցին: Բայց ուզում եմ մի անգամ եւս հիշեցնել, որ ես չեմ հավատում ո՛չ Ամալյանի, ո՛չ էլ մյուսների անկեղծությանը: Մեր նախագահը եթե ուզում է այդ հարցում օգնել իր ժողովրդին, պետք է նրանց տեղը նշանակի գործից հասկացող, ժողովրդի կողմից սիրված անձնավորությունների:

Խնդրում եմ մեր փորձագետներին. եկեք մի անգամ էլ հավաքվենք, մեր նախորդ հավաքները, չնայած ուշացումով, իրենց արդյունքը տվեցին՝ սայլը տեղից շարժվեց: Եկեք այդ սայլը հանենք ուղիղ ճանապարհի վրա եւ, ամենակարեւորը, խնդրենք մեր նախագահին, որ սայլը լավ վարող սայլապան գտնի:

ԿԱՌԼԵՆ ՔԱԼԱՇՅԱՆ

# Էրդողանի խայտառակությունը

## *Հայերին Թուրքիայից վտարելու հայտարարությամբ «օսմանյան» հոտ է փչում*

Հայաստանի հետ փակ սահմանի ու դրա բացման խոսակցությունների բացակայության պայմաններում Թուրքիան կարծես առավել հավասարակշիռ ու լուրջ մոտեցում էր դրսեւորում հարեւանին առնչվող հարցերին, քան հայ-թուրքական արձանագրությունների ստորագրումից հետո ստեղծված իրավիճակի պայմաններում, թեեւ, ըստ էության, կարելի էր սպասել ճիշտ հակառակը:

Այդուհանդերձ, Թուրքիայից միշտ եւ ամեն ինչ է սպասելի, ուստի թերեւս զարմանալու կարիք չկա, որ հայ-թուրքական արձանագրությունների ստորագրումից հետո կառուցողականությունից հեռու շատ հայտարարություններ են արվում թուրք ղեկավարության կողմից, որոնց զգալի մասը Եվրոմիությանն անդամակցելու ձգտող ու ընդհանրապես ժողովրդավար ու զարգացած լինելուն հավակնող Թուրքիայի անմիջապես հետո առաջին արձագանքս այն էր, ինչ արդեն ներկայացրել է «Առավոտ» օրաթերթի խմբագիրն իր խմբագրականում: Մասնավորապես, միտքը, թե Թուրքիան իր սեփական օրենքների հանդեպ անհարգանքը, որ դրսեւորվում է որեւէ այլ երկրի քաղաքացու անօրինական կեցության հետ համակերպվելու մեջ, փորձում է ներկայացնել որպես հոխորտանք Հայաստանի հանդեպ:

Զարմանալի է, որ ուզածս հարցում հետուառաջ անելու մեջ վարպետացած Թուրքիան ներկայացնող պաշտոնյայի այս հայտարարությունը չի հարուցել հենց Եվրոպայի, Միացյալ Նահանգների գոնե մտահոգությունը, թե ինչ կարգի երկիր է փորձում կիսել Եվրոմիությունում հարգվող մարդու իրավունքները: Որեւէ այլ երկրի պարագայում այսօրինակ հոխորտանքը ծիծաղ էլ կառաջացներ: Ինչո՞ւ պիտի Հայաստանը

Եվս մեկ կարեւոր հանգամանք վերաբերում է Թուրքիայում գտնվող հայերի՝ թուրքական լրատվամիջոցներով տարածվող աղերսանքներին՝ ուղղված թուրքական կառավարությանը: Թուրքական Netgazete-ի փոխանցմամբ, Ստամբուլի Քումքափը թաղամասում ապրող հայաստանցիները լուրջ անհանգստություններ մեջ են Էրդողանի հայտարարությունից հետո: Ըստ պարբերականի, հայերը չեն ցանկանում Թուրքիայից հեռանալ եւ խնդրում են Էրդողանին իրենց չվռնդել Թուրքիայից, մեկնաբանություններով, թե Հայաստանում աշխատանք չունեն, իսկ Թուրքիայում աշխատում ու ապրում են երջանիկ:

Այսօրինակ խնդրանքներ, ըստ թուրքական աղբյուրների, իբր շատ հայեր են ներկայացրել, որ ապրում ու աշխատում են Թուրքիայում: Բնավ էլ հասկանալի չէ, թե ինչո՞ւ են հայերը

պարագայում կարելի է ամենահետամնաց արեւելյան որակել, այն էլ մի պարզ հավելմամբ. բռի:

Թուրքիայի վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանը օրերս Լոնդոնում BBC-ի թուրքական ծառայությանը տված հարցազրույցում, խոսելով Թուրքիայի տարածքում բնակվող «170 հազար հայերի մասին, որոնցից միայն 70 հազարն են Թուրքիայի քաղաքացիներ», հայտարարել էր, թե այդ հայերից շատերը Թուրքիայում ապրում են տասը տարուց ավելի, ու Թուրքիան էլ չի պատրաստվում նրանց հարցը շուտափույթ լուծել:

Այդուհետեւ Էրդողանը նշել էր, որ եթե ամեն բան նույն կերպ շարունակվի, Թուրքիան ստիպված կլինի վերագնահատել իրավիճակը եւ համապատասխան քայլեր ձեռնարկել: «Այդ 100 հազարը մեր քաղաքացիները չեն, եւ եթե կարիք լինի, մենք կվտարենք նրանց մեր երկրից», ամենաուղղակի ձեւով ապացուցելով 20-րդ դարասկզբի Օսմանյան կայսրության հետնորդ լինելու հանգամանքը՝ հայտարարել էր Թուրքիայի վարչապետը:

Այսօրինակ մի հայտարարությամբ էլ Էրդողանի ասածներին արձագանքել էր Հայաստանի վարչապետ Տիգրան Սարգսյանը, ինչպես «**Ազգը**» արդեն տեղեկացրել է, նշելով. «Նման արտահայտությունները վկայում են, որ ցեղասպանության ճանաչման խնդիրը դեռեւս խիստ արդիականություն ունի, եւ խնդրի արմատական լուծումը լինելու է այն դեպքում, երբ Թուրքիան ինքը ճանաչի ցեղասպանությունը: Թուրքիայի վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանի սպառնալիքները Թուրքիայում բնակվող հայերին արտաքսելու մասին մեր հիշողություններում արթնացնում են 1915 թվականի Հայոց ցեղասպանության հիշողությունները»:

Միանշանակ կարելի է համաձայնել նման գնահատականին, այդուհանդերձ, այն իրապես չի գնահատում Էրդողանի՝ պարզամտության հետ սահմանակցող հայտարարությունը: Հայտարարությունից որեւէ կերպ անհանգստանա նման հայտարարությամբ, երբ, օրինակ, հազարներ են դեպորտացիայի ենթարկվում Ռուսաստանից, բայց դրանից չեն վատանում հայ-ռուսական հարաբերությունները:

Մյուս կողմից, հետաքրքրական է մեր հարեւանի մտածելակերպը, քանի որ նման հայտարարություն անելով Թուրքիան ցույց է տալիս, որ իր երկրի ներսում իսկ խնդիր լուծելու հարցում նախընտրում է արեւելյան շողոմությունը, ու այն, որ երկրում կարգուկանոն հաստատելը ներկայացվում է որպես սպառնալիք Հայաստանին, վկայում է թուրքական իրականության անօրինականության մասին:

Հայտարարությունը հիշեցնում է մեր մյուս հարեւանի՝ Վրաստանի կեցվածքը, երբ հարցը վերաբերում է թիֆլիսահայությանը կամ Ջավախքին: Չգիտես ինչու, բայց Ջավախքն ու ընդհանրապես վիրահայությունը իր խնդիրներով ավելի շուտ Հայաստանին զսպելու դեր է կատարում, քան զսպում է Վրաստանին, որը, այլ պարագայում, կոկորդ է պատռում, թե Ջավախքի հանդեպ որեւէ հայկական հավակնություն թույլ չի տա: Ջավախքի հարցերը, անկախ ամեն ինչից, ներկա իրավական վիճակից ելնելով, Վրաստանի ներքին խնդիրներ են, ու եթե, ասենք, Ջավախքում չգիտեն վրացերեն, դրանում Վրաստանը փոխանակ մեղադրելու Հայաստանին ու հայերին, պետք է նախ եւ առաջ ընդունի, որ առանց կարգին ուսուցչի լեզու չես սովորի այն դեպքում, երբ Ջավախքում կարգին չէ, այլ գրեթե չկա վրացերենի նորմալ ուսուցիչ:

Մասնավոր զրույցներում վրացական կողմից շատերն էին ժամանակին ասում, թե Հայաստանն է պարտավոր ապահովել Ջավախքին էլեկտրաէներգիայով, իսկ երբ արձագանքը զարմանքն էր լինում, թե ինչո՞ւ պիտի վրացական նահանգի համար մտածի Հայաստանը, պարզաբանում էին. «Բա հայեր են այնտեղ ապրում»: Հիմա էլ նման մի անմտություն է ասում Թուրքիան:

աղմուկ բարձրացնում, խնդրում թուրքական կառավարությանը չվտարել իրենց, երբ գիտակից աշխարհը, շատ պարբերականներ առնվազն ամոթալի, խայտառակ են որակում Էրդողանի հայտարարությունը: Ստացվում է, որ ժողովրդական խոսքը, թե «որտեղ հաց, այնտեղ կաց», կուլ է տվել ամեն ինչ՝ արժանապատվություն, գիտակցություն, ազգություն ու անգամ սեփական ապագան ապահով տեսնելու ողջամտություն:

Թուրքիայում, տարբեր տվյալներով, առանց անձը հաստատող փաստաթղթի հայերի շատ երեխաներ կան, որոնք անգամ կրթություն չեն կարող ստանալ դպրոցում: Ու հետաքրքրական է, որ երեխաների համար այդօրինակ իրավիճակը հանդուրժող հայերը Թուրքիայում դեռ խնդրում են թուրքական կառավարությանը չվտարել իրենց: Ավելի լավ կլիներ ընդհանրապես չհավատալ թուրքական աղբյուրներին, բայց ստեն ու պորտաբույծ... չեն կարող այսքան առերես կեղծիքների գնալ, ուրեմն եւ եղել են չվտարվելու խնդրանք հնչեցնողներ:

Եվս մեկ հանգամանք. հայերիս մեջ նորքաղաքացիությունը հիմնավոր բույն է դրել կարծես, այլապես դժվար կլինի հասկանալ Թուրքիայի ձեռքում հայերի պարագան խաղաքարտ սարքող մի քանի տասնյակ հազար, այլ ոչ հարյուր հազարավոր հայերի անունից չվտարվելու խնդրանք հնչեցնող մեր հայրենակիցների պահվածքը, հատկապես որ անօրինական չպետք է գտնվել որեւէ երկրում, այդ թվում՝ Թուրքիայում:

Հայերի խնդրանքը մեկ այլ փաստի ֆոնին առավել քան տգեղ է դիտվում. Էրդողանի հայտարարությունը քննադատության է արժանացել թուրքական որոշ քաղաքական ուժերի կողմից, անգամ ազգայնականներից ոմանց:

Ակամա հիշում ես Գրիգոր Զոհրապի հայտնի խոսքերը, թե թուրքն ինչպես կարող է վատն անել, երբ նախորդ օրը Թալեաթի հետ Զոհրապը ճաշ էր խաղում:

ԱՂԱՎՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ



# Ա. Լեբեդեւը 1 ֆունտով ձեռք բերեց The Independent թերթը



**Ռուսաստանցի գործարար Ալեքսանդր Լեբեդեւը ավարտել է բրիտանական The Independent թերթի ձեռքբերման գործարքը: Այդ մասին հաղորդվում է թերթի կայքէջում: Լեբեդեւի եւ Independent News & Media PLC ընկերության պայմանագրի համաձայն, գործարարը դարձել է The Independent, The Independent on Sunday թերթերի, ինչպես նաեւ հրատարակության պաշտոնական կայքէջի լիիրավ սեփականատերը:**

**Այդ ամենի դիմաց ձեռնարկատերը վճարել է «խորհրդանշական» 1 ֆունտ ստեռլինգ: Գործարքի պայմանների համաձայն, առաջիկա 10 ամսում Լեբեդեւը Independent News & Media ընկերությունից կստանա ավելի քան 9 մլն ֆունտ՝ պարտանքանիշի օգտագործման համար, իսկ փոխարենը իր վրա կվերցնի վերջերս լուրջ վնասներ կրող ընկերության պարտքերը:**

**Ավելի վաղ Լեբեդեւը համանման պայմաններով ձեռք էր բերել անգլիական The Evening Standard թերթը, որը ներկայումս կոչվում է The London Evening Standard:**

**Միլիարդատեր Ալեքսանդր Լեբեդեւը մասնավորապես «Ազգային պահուստային կորպորացիայի» սեփականատերն է, «Ազգային ներդրումային խորհրդի» նախագահն է, «Նովայա գազետա» թերթի հիման վրա ստեղծված «Նովիե մեդիա» մեդիահոլդինգի նախագահը:**

# Հեռուստատեսությունից դեպի գրական ասպարեզ

**Ըստ մասնագիտական վերլուծությունների արդյունքների՝ ռուսաստանյան Russia Today շուրջօրյա հեռուստաալիքը մեջբերումների տեսակետից մտել է դաշնային կենտրոնական հեռուստաալիքների հնգյակի մեջ: Ընդ որում, հաշվի է առնված հաղորդումների ոչ միայն մեջբերման քանակական կողմը, այլեւ հաղորդումների նկատելիությունը եւ հղումն այլ լրատվամիջոցներում: Քանի որ Russia Today-ը հեռարձակվում է անգլերեն, ապա ուշադրության են առնվել նաեւ արտասահմանյան լրատվամիջոցները, առաջին հերթին՝ տվյալ լեզվով թողարկվող: Համենայն դեպս մոտ 400 ամերիկյան հեռուստաալիքներ օգտվել են հիշյալ հեռուստաալիքի տեսաժապավեններից:**

**Այս փաստը հայերիս համար շահեկան է այն իմաստով, որ հեռուստաալիքը գլխավորում է մեր հայրենակցուհի Մարգարիտա Սիմոնյանը: Ծնված լինելով Կրասնոդարի երկրամասում, նա հայտնի դարձավ տարածաշրջանից ուղարկված ռեպորտաժներով:**

**Նորերս լրագրողի, հեռուստամենեջերի նրա իմիջին գումարվեց գրողի տաղանդը: Լույս տեսավ Մ. Սիմոնյանի «Դեպի Մոսկվա» վեպը, որը սուր սոցիալական պատմություն է 80-ական թվականների սերնդի մասին, գրված է հյութեղ, կենդանի լեզվով՝ համեմված հարավային հումորով եւ նուրբ լիրիկայով: Ահա թե ստեղծագործության մասին իրեն հատուկ հումորով ինչ է ասում հանրահայտ հեռուստահաղորդավար Թինա Կանդելակին. «Մարգարիտա Սիմոնյանը բոլոր շանսերն ունի դառնալու հայ կին ռուս գրականության մեջ: Մարգոյի նմաններին հայերն ասում են՝ «կյանքս»: Կարդալով նրա վեպը՝ ուզում ես վայելել կյանքը, ուտել-խմել, սեր անել եւ լույս աշխարհ բերել մանուկների»:**

ՌՈՒԲԵՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
Մոսկվա

# Կոնգրեսը ընդունեց առողջապահության բարեփոխման հավելյալ օրինագիծը

**ԱՄՆ Կոնգրեսը երեկ ընդունել է մի հավելյալ օրինագիծ, որը մի շարք փոփոխություններ է կատարում օրերս ընդունված առողջապահության համակարգի բարեփոխման օրենքում: Ասոշիեյթեդ պրես գործակալությունը հաղորդում է, որ Ներկայացուցիչների պալատում նոր օրինագիծն ընդունվել է 220 «թեր» եւ 207 «դեմ» ձայներով: Ավելի վաղ Սենատում հավելյալ օրինագծի օգտին քվեարկել էին 56, դեմ՝ 43 սենատորներ: Հավելյալ օրինագիծն արդեն ուղարկվել է նախագահ Բարաք Օբամային, որը ստորագրությամբ փաստաթուղթը կվավերացնի մոտ օրերս:**

**Առողջապահության համակարգի բարեփոխման օրինագիծը Ներկայացուցիչների պալատում ընդունվել էր կիրակի օրը, սակայն հանրապետական սենատորները խոչընդոտել էին դրա վերջնական հաստատմանը, բացահայտելով արարողակարգային որոշ փոքր թերություններ: Լրամշակված փաստաթուղթը մարտի 25-ին վերաքվեարկության էր ուղարկվել Ներկայացուցիչների պալատ. երեկ «Ազգը» գրեց այդ մասին:**

**Խնդրո առարկա փոփոխությունների փաթեթը նախատեսում է լրացուցիչ արտոնություններ կենսաթոշակառուների, աղքատ ընտանիքների, միջին խավի ներկայացուցիչների, ինչպես նաեւ ուսանողների համար: Նոր փաստաթուղթը առողջապահության համակարգի բարեփոխման հիմնական օրենքի փոխզիջողական լրացումն է: Կոնգրեսի զույգ պալատներում ընդունված օրենքը մարտի 23-ին ստորագրել էր նախագահ Օբաման:**

# ԿԺԴՀ-ն ԱՄՆ-ին եւ Հվ. Կորեային սպառնում է «միջուկային հարվածներով»

Երեկ ԿԺԴՀ-ն ԱՄՆ-ին եւ Հարավային Կորեային նախազգուշացրել է, որ «աննախադեպ միջուկային հարվածներ» կստանան, եթե փորձեն ապակայունացնել երկրի քաղաքական իրադրությունը: Այդ մասին հաղորդում է Ասոշիեյթեդ պրես գործակալությունը, վկայակոչելով ԿԺԴՀ զինվորական հրամանատարության հայտարարությունը:

Փենյանի ագրեսիվ պահվածքի առիթը մարտի 19-ին հարավկորեական լրատվամիջոցներում հայտնված այն հաղորդումներն են, որոնց համաձայն Հարավային Կորեան եւ ԱՄՆ-ը ռազմավարություն են մշակել ԿԺԴՀ հնարավոր նախահարձակմանը հակազդելու նպատակով:

# Մեքսիկացիները վերահսկում են ԱՄՆ թմրադեղերի շուկան

**Մեքսիկական կարտելները ուժեղացնում են վերահսկողությունը ԱՄՆ թմրանյութերի շուկայում: ԱՄՆ արդարադատության նախարարության զեկուցագրում ասվում է, որ մեքսիկացի թմրաբարոնները գործողություններ են իրականացնում ԱՄՆ բոլոր տարածաշրջաններում:**

**Չնայած Մեքսիկայից ԱՄՆ թմրանյութերի անցկացման դեմ Վաշինգտոնի ծավալած պայքարին, մեքսիկական կարտելները ավելացրել են ԱՄՆ շուկայի համար նախատեսված հերոինի, մետամֆետամինի եւ մարիխուանայի արտադրությունը:**

**2007-ին ԱՄՆ-ը որոշեց 3 տարում 1,4 մլրդ դոլար հատկացնել Մեքսիկայի տարածքում թմրակարտելների դեմ մղվող պայքարին: Բայց արդեն 2008-ին Մեքսիկայի տարածքում հերոինի արտադրության ծավալը 17-ից հասավ 38 մետրական տոննայի: Արդարադատության նախարարության վերոհիշյալ զեկուցագիրը վկայակոչելով՝ BBC-ն հաղորդում է, որ հերոինի արտադրության կրկնապատկումը հանգեցրեց ԱՄՆ-ում դրա էժանացմանը եւ թմրանյութի չարաշահումից մահացողների թվի աճին:**

**Մեքսիկացի թմրավաճառներն էլ հմտացել են իրենց գործում եւ գտել են ԱՄՆ-ում թմրադեղերի առեւտրից ստացվող եկամուտները Մեքսիկա ուղարկելու նոր եղանակներ: Ամեն տարի սահմանով անցկացվում է մոտ 40 մլրդ դոլար կանխիկ դրամ:**

**Օրերս Մեքսիկա այցելած ԱՄՆ պետքարտուղար Հիլարի Քլինթոնը երկրի իշխանություններին կոչ է արել վճռականորեն պայքարել սոցիալական դժվարությունների դեմ, որոնք երիտասարդներից շատերին ստիպում են ընդգրկվել թմրակարտելներում:**

AZG NEW PDF.qxd 26/03/2010 22:29 Page 1



Ժամանակի առաջընթաց փոփոխությունները, նոր տեխնոքաղաքակրթությունը վաղուց արդեն խախտել են մեր կյանքի ռիթմը, մտածողական շատ ստերեոտիպեր: Մայրաքաղաքից դուրս, սակայն, կյանքը շարունակում է մնալ այսպես ասած ինքնապաշտպանված, ինքնապահպանման ներքին բնազդային մղումը ավանդական մտածողությանն ու սովորույթներին ավելի ամուր է պահում գյուղաշխարհի մարդուն, տարբեր են նաեւ այդ բնակավայրերի մտավորական զբաղմունքի տեր մարդկանց գործելակերպը, մտածողությունը. մի քիչ պահպանողական, բայց անաղարտ՝ ազգային լեզվա-մշակութային գեղեցիկ պատյանում: Այս տպավորությունը ստացել եմ և՛ Բերդում, և՛ Մեղրիում, և՛ անգամ Ծաղկաձորում, իսկ օրերս՝ Օշականում, երբ այցելեցինք՝ Տեր Մկրտիչ վրդ. Պռոշյանի առաջնորդական տեղապահությամբ գործող տեղի Սբ Մեսրոպ Մաշտոցի եկեղեցուն կից Խրիմյան վարժարան:

# «Օշականի ամենասուրբ գերեզմանի» մոտ

## «Խրիմյան դասընթացների» հոգեւոր սերմերը



Օշականում էլ գարունը վաղ է սկսվել. ծառերի ճերմակ հայացքից կյանքը կրկին վերահաստատում է իր գեղեցկությունը...հին բույնը վերանորոգող արագիլների պես:

Խրիմյան վարժարանն արդեն գործունեության 2-րդ տարին է բոլորում, եւ ընտրության վայրը ճիշտ համահունչ է վարժարանի հոգեւոր-մշակութային բովանդակությանը, ինչը Նյու Ջերսիում ապրող մեր հայրենակից **Սիլվա Տեր-Ստեփանյանի** մտահղացման արգասիքն է: Սիլվան իր էությամբ ու կոչումով մանկավարժ-մեթոդիստ է, կրթական գործի մի նվիրյալ, ազգային մտածողության եւ հայեցի կրթության զարմանալի ջատագով: Իր կյանքի նպատակը օտար միջավայրում հային հայ պահելու ազգաշահ գործունեությունն է, որի դրսեւորումներից ամենակարեւորը Նյու Ջերսիում հիմնած Խրիմյան վարժարանն է, իր մշակած ուսումնական ծրագրերն ու բազմաբովանդակ գրքերը: Ի դեպ, նա բացառիկ շնորհ ու տաղանդ ունի մեթոդական ձեռնարկների եւ դասագրքերի հեղինակման: Նրա կրթական հայեցակարգի հիմքում ընկած է բանիմաց, գիտակից բարոյական ու հոգեւոր կիրթ նկարագրով անհատի դաստիարակությունը: Սկզբունքներ, որոնք նա փորձում է կիրառելի դարձնել նաեւ հայաստանյան կրթական ծրագրերում, որոնք գուցե այժմ չեն վերաձեւվում հանրակրթական մեր ստանդարտներին, բայց խիստ անհրաժեշտ են մեր հասարակությանը:

Առաջին նման փորձերը Օշականի Սբ Մ. Մաշտոց եկեղեցում անցկացված դասընթացներում հաջողություն արձանագրեցին, եւ ձեւավորվեց Խրիմյան կրթարանը, որը գործում է շաբաթը մեկ օր՝ ամեն չորեքշաբթի: Վաթսունութ աշակերտ կամավոր հաճախում է այս դասընթացներին, որոնց հիմքում երեխայի մեջ ազատ մտածողություն ձեւավորելու սկզբունքն է ընկած: Դասընթացները միտված են լիարժեք անհատի ձեւավորման խնդրին՝ դա ազգային մտածողության սերմանումն է, գեղագիտական ճաշակի զարգացումը, շրջակա միջավայրի հանդեպ վերաբերմունքի ձեւավորումը:

Խրիմյան կրթական ծրագրի պատրաստողը Սիլվա Տեր-Ստեփանյանն է, դպրոցի ընդհանուր հոգածությունը կատարում է **Նեկտար Սարգսյան-Մանրոն**: Եկեղեցու դպրանոցի մթնոլորտը, որտեղ տեղի են ունենում դասընթացները, արդեն իսկ նպաստավոր հող է ստեղծում երեխայի հոգեւոր սնուցման համար, նրա հոգեւոր կրթության հիմքերը դնում: Սահմանափակ քանակով ուսուցիչներ (4-5) ուսուցանում են բարոյագիտություն, կենցաղավարության տարրական հիմունքներ, եկեղեցու պատմություն (ծեսեր, աղոթքներ, վարքաբանություն), երգեցողություն, արտասանություն, ձեռարվեստ: Մեր այցելության ժամանակ կարգավորվում էր նաեւ համակարգչային սենյակը, նոր ստացված համակարգիչները շատ երեխաների համար միանգամայն նորություն կլինեն, համակարգչային դասընթացը նրանց նախնական գիտելիքներ կհաղորդի մեր կյանքի՝ այլեւս անքակտելի կարեւորագույն այս ոլորտի մասին:

Ձեռարվեստի ընդարձակ սենյակում ազգային-հոգեւոր թեմաներով արված երեխաների տարբեր աշխատանքներն են՝ նկարներ, գոբելեններ, թղթից պատրաստված պատկերներ, խեցեգործական իրեր: Ուսուցիչը **Արեն Գալստյանն** է: Նրա խոսքով վարժարանի հիմնական ուղղվածությունը հայեցի դաստիարակությունն է, որին նպաստում է դպրոցի՝ եկեղեցուն կից գործելը. *«Որոշակի կաղապարներ չեն պարտադրվում, բայց դաստիարակությունը տարվում է քրիստոնեական առաքելական ոգով, որին օգնում են թեմատիկ-ծրագրային նյութերը (ընտրվում են ազգային-մշակութային պատմության երեւելի դեմքեր եւ կարեւոր իրադարձություններ): Ծանոթանում են նաեւ այլ մշակույթների, որ գլոբալիզացիոն այդ շարժումների մեջ տարբերությունները զգան եւ կարողանան իրենց հայկականությունը պահել»:*

Առհասարակ ոչ միայն կրթական, այլեւ ներհասարակական մեր կյանքում գիտելիքի ահռելի պակաս կա բարոյագիտական եւ կենցաղավարության առումով: Խրիմյան կրթարանում այս առարկաների դասավանդումը վստահված է **Արմենուհի Գալստյանին**, որին օգնում է Սիլվա Տեր-Ստեփանյանի հեղինակած «Զարթիր» դասագիրքը: Բարոյագիտության դասընթացը հիմնված է քրիստոնեական գաղափարախոսության վրա: Ուսուցչուհին համոզված է, որ Հիսուսի պատվիրաններին հետեւելը՝ նրանց կյանքի մեջ լուրջ փոփոխություններ առաջացնելու, հոգեւոր կայծը արթնացնելու լավագույն ճանապարհն է:

**Էլյա Հարությունյանը** հանրակրթական դպրոցի 9-րդ դասարանում է սովորում, նա կամավոր մասնակցում է Խրիմյան կրթարանի դասընթացներին, խելացի աչքերով ուշադիր ունկնդիր է: Ուզում եմ, որ անկեղծ լինի, թե դասընթացներին իր մասնակցությունը ի՞նչ փոխեց իր կյանքում: Ու նա անկեղծ էր՝ իհարկե՝ նոր ընկերներ, կրոնական եւ այլ գիտելիքներ, միջավայրի հանդեպ ավելի ուշադիր վերաբերմունք: Խոսքը գրագետ է, մտածված: Ուշադրությունս գրավեց աղջկա վերջին արտահայտությունը. *«Մեջս զարգացրի եկեղեցու նկատմամբ սեր, հիմա շատ եմ այցելում, ազատ ու ապահով եմ զգում այստեղ»:*

Ինչպես **Վիգեն քահանա Մանուկյանն** է ասում, աշակերտի եւ ուսուցիչների ճիշտ հարաբերության ամենակարեւոր պայմանը՝ սերը, կայացել է: Օշականի Սբ Մեսրոպ Մաշտոց եկեղեցու հոգեւոր հովիվը՝ տեր Վիգենը երիտասարդ հոգեւորական է՝ նորի, փոփոխությունների հակված: Մինչեւ վերջերս նա էր տնօրինում Խրիմյան կրթարանի աշխատանքները: *«Դպրոցը քանի որ մեր միջավայրում նորություն է, առաջին տարին դժվարություններ ունեցավ. փորձում էինք ծրագրին հարմարվել, կամ մեզ հարմարեցնել: Սփյուռքում եւ Հայաստանում խնդիրները տարբեր են, այնտեղ շեշտը դրված է լեզվապահպանության վրա, երեխան այստեղ իր ազգային միջավայրում է, ամեն պարագայում հայկական բառուբանը իր կենսակերպի անհրաժեշտ մասն է կազմում: Մենք շեշտադրումը փոխեցինք դեպի եկեղեցի, եկեղեցական կառույցի, հոգեւոր իրողությունների մուտքը երեխայի մտածողություն եւ այն որպես շնչող, կենդանի օրգանիզմ, կյանքի մաս կազմող ամբողջություն ներկայացնելով»:*

Դասընթացների ծրագրերում փոփոխությունների անհրաժեշտությունը, ինչպես նկատում է հայր Վիգենը, պայմանավորված է մեր երկրի, մեր միջավայրի առանձնահատկություններով, ըստ որում եթե ցանցը ընդլայնվի եւ այն տարածվի Հայաստանի այլ մարզերում, ապա պետք է հաշվի առնել տեղական առանձնահատկությունները եւս: Սա վերաբերում է և՛ կազմակերպչական, և՛ ուսուցողական ծրագրերին (ավելի խորացված ուսուցում, 6-ամյա ուսընթացքի կրճատում, դասընթացների կիրակնօրյա անցկացում եւ այլն):

Արտադպրոցական այս դասընթացները անպայմանորեն շահեկան են, քանի որ խորքում սերում են մարդասիրական գաղափարներից եւ շահեկան են հենց հանրային կյանքին, որովհետեւ կիրթ ու բանիմաց անհատներից կազմված հասարակությունն է, որ ապագայի հույս կարող է ներշնչել: Մանավանդ որ այդ ծրագրի հիմքում ղեկավար պատրաստելու խնդիրն է դրված:

Դեռ երկար ճանապարհ կա անցնելու...

ՄԵԼԱՆՅԱ ԲԱԴԱԼՅԱՆ

«ՈՍԿԵ ԾԻՐԱՆ»

# Կինոդպրոցի հյուրը՝ Յոս Ստեռլինգը հանդիպեց լրագրողների հետ

«Ոսկե ծիրան» տարածաշրջանային բարձրագույն կինոդպրոցն իր գործունեությունը սկսել է 2008-ին, երբ առաջին անգամ վարպետության դասերով հանդես եկավ «Ոսկե ծիրան» կինոփառատոնի նախագահ, կանադահայ աշխարհահռչակ ռեժիսոր **Ատոմ Էգոյանը**: Հայաստանի, Վրաստանի, Իրանի եւ Թուրքիայի երիտասարդ կինոգործիչները շարունակեցին իրենց աշխատանքները եւ իրանցի հանրահայտ ռեժիսոր Աբբաս Քիարոստամիի ղեկավարությամբ նկարահանեցին 16 կարճամետրաժ ֆիլմ՝ մեկ շաբաթվա ընթացքում: Կինոդպրոցը սկսեց նաեւ մեկամսյա դասընթացների անցկացումը, որոնց ընթացքում ուսանողները դասախոսություններ էին լսում ռեժիսուրայի, սցենարական եւ օպերատորական վարպետության, կինոյի պատմության եւ այլ առարկաներից, ինչպես նաեւ պրակտիկ աշխատանքներ կատարում: Ինչպես տեղեկացրեց փառատոնի ծրագրերի տնօրեն **Միխայել Ստամբոլցյանը**, «բացի դրանից մենք պարբերաբար հրավիրում ենք համաշխարհային կինոյի նշանավոր դեմքերին, որպեսզի մեր ուսանողների հետ վարպետության դասեր անցկացնեն եւ նաեւ գործնական աշխատանք անեն: Ահա այդպիսի դասընթացներ է անցկացնում հոլանդացի հանրահայտ կինոռեժիսոր եւ սցենարիստ Յոս Ստեռլինգը կինոդպրոցում, ու նաեւ իր վերահսկողությամբ նկարահանվում է 3 կարճամետրաժ խաղարկային ֆիլմ «Սերը եւ քաղաքը (Երեւան)» թեմայով:

Փառատոնի գեղղեկ **Սուսաննա Հարությունյանը** նշեց, որ 20 սցենարական հայտերից Ստեռլինգն ինքն է ընտրել 3 սցենար, որոնք ըստ նրա, ոչ թե լավագույններն էին, այլ ամենահարմարն էին մի քանի օրում նկարելու համար: Դրանք են Հասմիկ Հովհաննիսյանի «Գլխարկ», Մարիանա Եղիազարյանի «Գաղտնիք» եւ Արթուր Սուքիասյանի «Երեւանի սիրուն տղա» սցենարները:

Ներկայացնելով հյուրին, պրն Ստամբոլցյանն ասաց, որ Յոս Ստեռլինգը 3-րդ անգամն է Երեւանում: Մեկ տարի առաջ նրա 60-ամյակը Փարաջանովի տուն-թանգարանում նշվել է մեծ շուքով: Իսկ 2-րդ անգամ ռեժիսորը Հայաստան է այցելել 2008-ին եւ «Ոսկե ծիրան» փառատոնին ներկայացրել «Դուշկա» ֆիլմը: Այժմ ռեժիսորը աշխատում է նոր ֆիլմի վրա՝ «Աղջիկը եւ մահը», հոգեբանական մի սցենարով, որը երկու տարի հետո միայն կավարտվի: Պատասխանելով լրագրողների հարցերին Յոս Ստեռլինգը նշեց. «Մեծ հաճույքով եմ գալիս Երեւան եւ ինձ զգում եմ ինչպես տանը: Մի առիթով գաղափար տվեցի, որ ծիրանի գարեջուր արտադրեն, սակայն ոչ ոք դա չարեց... Ֆիլմը հսկայական նշանակություն ունի տվյալ երկրի համար, քանի որ հենց ֆիլմով ես ճանաչում այդ երկիրը. եթե չկա ֆիլմ՝ դու զրկվում ես այդ երկրի մասին տեղեկանալուց: Հոլանդիայում ֆիլմերը արտադրվեցին, որպեսզի դիմակայենք ամերիկյան ֆիլմերին ու ստեղծեցինք կինոհիմնադրամ եւ կինոարտադրություն: Ձեր երկրում կինոթատրոնների կարիքը շատ կա, քանի որ դուք շատ լավ ֆիլմեր եք արտադրում: Հոլանդիայում ամեն մարդ կարող է ինտերնետով 60 ֆիլմ մեկ օրում դիտել, տանը նստած, առանց մարդկանց հետ շփվելու: Եվ քանի որ մարդկային շփումները ֆիլմերից հետո քննարկումները շատ կարեւոր են, ես ստեղծեցի իմ կինոթատրոնը, որտեղ միայն հեղինակային ֆիլմեր ենք ցուցադրում»: Հյուրը բարձր գնահատեց դասընթացների անցկացումը եւ կարեւորեց դրանք՝ կինոարտադրության զարգացման ու ֆիլմ նկարահանելու տեսակետից:

Տեղեկացնենք, որ «Ոսկե ծիրան» միջազգային կինոփառատոնն այս տարի կանցկացվի 7-րդ անգամ՝ հուլիսի 11-18-ը: Մյուս կողմից տեղեկացնենք, որ Շվեյցարիայի Ֆրիբուրգ քաղաքում մարտի 13-20-ը անցկացվող 24-րդ միջ. կինոփառատոնին **Հարություն Խաչատրյանի** «Սահման» ֆիլմը արժանացել է Կինոքննադատների միջազգային ասոցիացիայի՝ ՖԻՊՐԵՍ-ի (FIPRESCI) կողմից նոր մրցանակի ու նաեւ հրավիրվել Իսրայելում ու ԱՄՆ-ում հատուկ ցուցադրության:

ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ

# Երեւանում անցկացվում է թուրքական ֆիլմերի փառատոն

Մարտի 25-27-ը Երեւանում արդեն 2-րդ անգամ անցկացվում է թուրքական ֆիլմերի փառատոն, որը կոչվում է հայտնի լրագրող եւ իրավապաշտպան Հրանտ Դինքի հոդվածներից մեկի անունով՝ «23,5»:

Փառատոնի մասին **«Ազգ»-ը** գրել է մարտի 18-ի համարում: Ֆիլմերը պետք է ցուցադրվեին Կամերային պետական թատրոնի դահլիճում: Թատրոնի եւ փառատոնի տնօրենությունների միջեւ կնքվել էր համագործակցության պայմանագիր, սակայն Կամերային թատրոնը փառատոնից մի քանի օր առաջ միակողմանիորեն լուծարեց պայմանագիրը, այնինչ պայմանագրում արձանագրված էր, որ այն ենթակա է լուծարման միայն երկու կողմերի փոխադարձ համաձայնության դեպքում:

«Կամերային թատրոնի տնօրեն Արա Երնջակյանը մի ողորմելի նամակագրություն սկսեց ինձ հետ: Նա պատճառաբանում էր իբր թատրոնում վթարային իրավիճակ է, սակայն թատրոնը հենց այս պահին էլ շատ լավ գործում է ու այնտեղ ոչ մի վթարային վիճակ էլ չկա: Ես մտադիր եմ դիմել դատարան», երեկ «Հայացք» ակումբում՝ ասուլիսի ժամանակ հայտարարեց «23,5»-ի տնօրեն **Գեորգի Վանյանը**:

Ինչեւէ, մարտի 25-ին արդեն մեկնարկել է փառատոնը: Թուրքական ֆիլմերը ցուցադրվելու են Ալեք Մանուկյան 9 հասցեում գտնվող Ամերիկյան համալսարանի բիզնես կենտրոնի դահլիճում: Փառատոնի շրջանակներում Կամերային երաժշտական պետական թատրոնում ներկայացվելու է նաեւ «Նիգյար» մոնոներկայացումը, որի հեղինակն ու բեմադրիչը Թուրքիայի «Դանս Բուլուշմա, Իստանբուլ» պարարվեստի դպրոց-ստուդիայի ղեկավար Այթյուլ Հասալթունն է:

Նիգյարը կնոջ անուն է, նաեւ նշանակում է գեղեցիկ դեմքով սիրունիկ: Ներկայացումն արծարծում է Թուրքիայում ապրող կանանց խնդիրները:

«Ես միշտ հավատացել եմ ժողովուրդների եղբայրությանը: Մեր ժողովուրդների միջեւ խնդիրներ չկան, խնդիրները մեր իշխանությունների միջեւ են», ասուլիսի ժամանակ ասաց Այթյուլ Հասալթունը:

ԻՆԳԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

# Մարտի 27-ը Թատրոնի միջազգային օրն է

Ավանդույթի համաձայն, Հայաստանի թատերական գործիչների միությունն ամեն տարի մարտի 27-ին՝ Թատրոնի միջազգային օրը, անցկացնում է «Արտավազդ» ամենամյա մրցանակաբաշխությունը: Այս տարի այն նվիրված է հայ բեմի մեծ երախտավորներ Վարդան Աճեմյանի եւ Արուս Ասրյանի ծննդյան 105-ամյակներին:

Մրցանակաբաշխությունը տեղի կունենա Հ. Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի թատրոնում: Միջոցառման սցենարի հեղինակ Հովհաննես Թեքգյոզյանն ու ռեժիսոր Գրիգոր Խաչատրյանը խոստանում են տոնն ավելի գեղեցիկ ու հետաքրքրական անցկացնել, եւ թատերարվեստի երախտավորներին տոնական տրամադրություն պարգեւել:

Մ. Մ.

AZG NEW PDF.qxd 26/03/2010 22:30 Page 1



# Արթուր Աբրահամ. «Ռինգում պատրաստ եմ ամեն ինչի»



Գերմանական լրատվամիջոցների ուշադրության կենտրոնում Աբրահամ-Դիրել մրցամարտն է, որ կայանալու է Դետրոյթում մարտի 28-ին եւ ուղիղ եթեր է հեռարձակվելու գերմանական ARD-ով: Հայաստանում այն ուղիղ հեռարձակմամբ կարելի է դիտել «Շանթի» եթերում, առավոտյան ժամը 6-ին:

Գերմանիայում Աբրահամն ամենաճանաչված հայն է, ում համակրում են նաեւ նրանք, ովքեր բռնցքամարտի մեծ երկրպագու չեն: Այս սերը Արթուրը նվաճել է առաջին հերթին իր պրոֆեսիոնալիզմով, բայց նաեւ` լրատվամիջոցների ուժը կարեւորելով. վերջիններս «հետապնդում» են նրան, ինքն էլ գիտի` ժպտալով, խելամիտ պատասխանները ակնդիրների, ընթերցողների սիրտը տանող ամենակարճ ուղին են, ու ահա` հանրային հետաքրքրությունն աճում է, հեղինակությունը` նույնպես: «Ինձ համար կարեւոր է, որ մարդիկ իմանան, թե որտեղից են արմատներս: Ոչ մի դեպքում չպիտի մոռանալ հայրենիքը: Վեցնյակի գերմրցաշարից հետո մտադիր եմ ընտանիք կազմել, 3 տղա եւ մեկ աղջիկ ունենալ: Բռնցքամարտով կզբաղվեն միայն տղաները: Ոչ մի դեպքում չեմ ուզում, որ դուստրս մարտական որեւէ մարզաձեւով զբաղվի: Կապտած քթով, աչքով աղջիկ տանը չեմ ուզում տեսնել», ասել է Արթուրը:

Նրա առաջիկա հաղթանակին սպասող լրատվամիջոցներն իրազեկում են, թե Արթուր Աբրահամը Դետրոյթում իրեն լավ է զգում, կատարելագործում է անգլերենը: Թեպետ Գերմանիայից հեռու, բայց նրա երկրպագուները փոքրաթիվ չեն լինելու, քանի որ Դետրոյթում շուրջ 20 000 հայ է ապրում: Հայ համայնքն արդեն կազմակերպել է, մրցամարտին ներկա են լինելու Դետրոյթի ոչ միայն ոսկերիչները, այլեւ մտավորականներն ու հոգեւորականներն անգամ, Լոս Անջելեսից էլ մեծաթիվ հայեր են ժամանելու: Լրատվամիջոցները նաեւ հաղորդում են, թե Աբրահամի մենեջեր Զաուերլանդը բողոքել էր, որ մրցամարտի մրցավարներից երկուսը Դիրելի հայրենի Միչիգանից են, իսկ երրորդն այն մեքսիկացին է, որ Ֆրոչի հետ մրցամարտում միավորներ էր «նվիրել» Դիրելին: Մրցավարական նոր կազմը հիմա երկու կողմին էլ բավարարում է:

Աբրահամը վեցյակի գերմրցաշարի առաջատարն է. «Դեռ հիմք չկա մտածելու հնարավոր կիսաեզրափակիչի մասին: Նպատակամղված պատրաստվել եմ այս մրցամարտին, հաղթահարել եմ ժամային տարբերությունները եւ ուզում եմ լավ մրցամարտ ցուցադրել»: Քաշային կարգը փոխելը դրական ազդեցություն է թողել, մի քանի կգ նիհարելն այլեւս լուրջ խնդիր չի հարուցում:

«Աբրահամն ուժեղ հարվածների է տիրապետում, բայց իսկական բռնցքամարտը խնդիր է նրա համար: Նրա նմաններին միլիոն անգամ եմ տեսել», «Դետրոյթ ֆրի փրեսին» կարծիք է հայտնել Դիրելը: Նա իր մրցակցի մասին նույնքան կիրթ չէր արտահայտվել նաեւ «Բիլդի» հետ զրույցում. «Աբրահամը շատ կարճ ձեռքեր ունի, ես նրան առաջինը պարտության կմատնեմ: 20 000 երկրպագու ինձ կմղեն մարտի, իմ 30 հոգանոց ընտանիքն էլ ինձ հետ է լինելու, իսկ միլիոնավոր հեռուստակնդիրներ հենց ինձ են հաղթանակ մաղթելու: Որովհետեւ ես կայծակնային արագություն ունեմ, պարում եմ ինչպես Մուհամմեդ Ալին, անընդհատ փոխում եմ տեղս, այդպես Աբրահամին կշփոթեցնեմ», մեկնաբանել է Դիրելը, իսկ նշանածի կողմը շրջվելով, հավելել. «Ապրիլի 24-ին մեր պսակի զանգերն են ղողանջելու, իմ նվերը Աբրահամի գլուխն է լինելու»: Matrix մականունով հայտնի բռնցքամարտիկի մարզիչը նրա պապն է` Լեոն Լոսընը: Հայրը լքել է ընտանիքը, իսկ պապը ոչ միայն տիրություն է արել, այլեւ փողոցային կռիվների հանդեպ հետաքրքրություն ունեցող տղայի մեջ սեր արթնացրել բռնցքամարտի հանդեպ: Ի նշան երախտագիտության, Դիրելը պապի պատկերն է դաջել տվել իր ուսին:

«26-ամյա Դիրելը վեցյակի ֆավորիտներից մեկն է, 1,88 սմ հասակ ունեցող ամերիկացին արագ ոտքեր ու բռունցքներ ունի, իսկ Աբրահամի հոբբին շախմատն է, նա վերլուծում է խաղը, հետո դանդաղ ներքաշվում դրա մեջ», գրում է «Զյուդդոյչե ցայտունգը»: Ամերիկացի վերլուծաբանները կարծում են, թե մրցամարտը 2 ավարտ կարող է ունենալ` կամ 10 սմ-ով կարճահասակ Աբրահամը կգետնի Դիրելին, կամ վերջինս կհաղթի միավորների առավելությամբ:

Դետրոյթում ավանդույթ կա` հակառակորդի վրա թանաքաձուկ են շպրտում, բայց կոտրած ծնոտով հաղթանակի բերկրանքը վայելած Աբրահամին դա հունից չի հանի: Հարավային Աֆրիկայում հատուկ այս մրցամարտի համար նախշազարդված թիկնոցն Աբրահամը մրցամարտից հետո, ինչպես միշտ, աճուրդի է դնելու` ի նպաստ որբ երեխաների:

**ԱՆԱՀԻՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ**
**Գերմանիա**

ՇԱԽՄԱՏ

# Արոնյանն անհաջող ելույթ ունեցավ

**Նորվեգացի Մագնուս Կառլսենը եւ ուկրաինացի Վասիլի Իվանչուկը հաղթող ճանաչվեցին Ֆրանսիայի Նիս քաղաքում ավարտված շախմատի «Ամբեր» մրցաշարում: Նրանք 22 հնարավորից վաստակեցին 14,5 միավոր: Ավարտական տուրում Իվանչուկը 1,5-0,5 հաշվով պարտության մատնեց Բորիս Գելֆանդին եւ միավորներով հավասարվեց Կառլսենին, որը Գրիշչուկի հետ մրցավեճում զիջեց «կույր» պարտիայում, հաղթեց արագ շախմատի մրցախաղում: 13 միավորով 3-րդ տեղը զբաղեցրեց Վլադիմիր Կրամնիկը, որը Կարյակինի հետ մրցավեճն ավարտեց 1-1 հաշվով: Կրամնիկին հաջողությունն ուղեկցեց «կույր» շախմատի մրցախաղում:**

**Մրցաշարում չափազանց անհաջող հանդես եկավ Լեւոն Արոնյանը, որը նախորդ երկու տարիներին Նիսում հաղթող էր ճանաչվել: Լեւոնն անհաջող մեկնարկեց, որից հետո այդպես էլ չկարողացավ կարգավորել խաղը: Ավարտական տուրում թեեւ նա հաղթեց կուբացի Լենիեր Դոմինգեսին (1,5-0,5), սակայն 11 միավորով 12 մասնակիցների մեջ գրավեց միայն 9-րդ տեղը:**

**Ռուսլան Պոնոմարյովը 1,5-0,5 հաշվով հաղթեց Յան Սմիթսին, իսկ Հաշիմովն ու Սվիդլերը երկու պարտիաներում էլ հաշտություն կնքեցին: Մրցաշարի մյուս մասնակիցների ցուցանիշներն այսպիսին են. Գրիշչուկ` 12,5, Կարյակին` 12, Հաշիմով, Գելֆանդ, Սվիդլեր` 11,5-ական, Պոնոմարյով` 9, Սմիթս` 6, Դոմինգես` 5:**

**«Կույր» շախմատի մրցաշարում հաղթող ճանաչվեց ռուսաստանցի Ալեքսանդր Գրիշչուկը` 8 միավոր: Կառլսենը, Իվանչուկն ու Կրամնիկը վաստակել են 6,5-ական միավոր: Արոնյանը 5 միավորով կրկին 9-րդ տեղում է:**

**Արագ շախմատի մրցաշարում 8-ական միավոր վաստակեցին Կառլսենն ու Իվանչուկը: Նրանցից 1,5 միավոր հետ մնացին Կարյակինն ու Կրամնիկը: Արոնյանը 6 միավորով Հաշիմովի եւ Սվիդլերի հետ բաժանեց 5-7-րդ տեղերը:**

# Մեսին ձգտում է նվաճել նաեւ «Ոսկե խաղակոշիկը»

**2009-ի աշխարհի լավագույն ֆուտբոլիստ, իսպանական «Բարսելոնի» արգենտինացի հարձակվող Լիոնել Մեսին ընթացիկ մրցաշրջանում աչքի է ընկնում արդյունավետ խաղով, որի շնորհիվ նա հավակնում է Եվրոպայի լավագույն ռմբարկուի տիտղոսին: Մեսին հայտարարել է, որ շատ է ցանկանում տիրել «Ոսկե խաղակոշիկին»:**

**«Շատ հաճելի կլիներ նվաճել «Ոսկե խաղակոշիկը»: Երբ նայում եմ այդ մրցանակի հավակնորդների ցանկին, զարմանում եմ, որ ավելի շատ գոլեր եմ խփել, քան Դիդյե Դրոգբան: Նաեւ մեծ նվաճում է, որ ընդամենը մեկ գնդակով եմ զիջում անգլիացի Ուեյն Ռունիին: Նա հիասքանչ հարձակվող է: Ռունին շարունակում է կատարելագործվել եւ չափազանց հաջող մրցաշրջան է անցկացնում», նշել է Մեսին:**

**Ֆուտբոլասերներին հիշեցնենք, որ «Ոսկե խաղակոշիկի» համար պայքարում հաշվի են առնվում ֆուտբոլիստների վաստակած միավորները, որոնք տացվում են խփած գոլերը տվյալ երկրի առաջնության համար սահմանված գործակցով բազմապատկելու արդյունքում: Եվրոպական առաջատար 5 առաջնությունների` Իսպանիայի, Իտալիայի, Անգլիայի, Ֆրանսիայի եւ Գերմանիայի գործակիցն ամենաբարձրն է (2): Միջին մակարդակ ունեցող առաջնությունների գործակիցը 1,5 է, իսկ ցածր մակարդակ ունեցողներինը, այդ թվում նաեւ Հայաստանինը, մեկ է:**

**Այս տարին «Ոսկե խաղակոշիկի» հավակնորդների ցանկը գլխավորում է «Մանչեսթր Յունայթեդի» հարձակվող Ուեյն Ռունին, որը վաստակել է 52 միավոր` խփելով 26 գնդակ: Նրան ընդամենը 2 միավորով է զիջում արգենտինացի Լիոնել Մեսին, որը խփել է 25 գնդակ: 3-րդ ցուցանիշն ունի «Չելսիի» հարձակվող Դիդյե Դրոգբան, որի խփած 24 գնդակները նրան 48 միավոր են պարգեւել: Ավելի արդյունավետ խաղ է ցուցադրում հոլանդական «Այաքսում» հանդես եկող Լուիս Սուարեսը, որը խփել է 29 գնդակ: Սակայն Հոլանդիայի առաջնության գործակիցը 1,5 է, ուստի Սուարեսի օգտին 43,5 միավոր է գրանցված: Ընդհանրապես Հոլանդիայի առաջնությունն աչքի է ընկնում բարձր արդյունավետությամբ, սակայն 1,5 գործակցի պատճառով այդ երկրում հանդես եկող ֆուտբոլիստները հնարավորություն չեն ունենում նվաճել «Ոսկե խաղակոշիկը»: 42 միավորով 5-րդ տեղում է Իտալիայում հանդես եկող Անտոնիո դի Նատալեն:**

**Որպես կանոն, պատվավոր մրցանակին արժանանում են եվրոպական առաջատար 5 երկրներում խաղացող ֆուտբոլիստները բարձր գործակցի շնորհիվ:**

# Խաղացանկն էլ նպաստավոր է ՀՀ հավաքականի համար

***Սեպտեմբերի 3-ին Իռլանդիայի հավաքականի հետ երեւանյան հանդիպումով Հայաստանի ազգային հավաքականը կսկսի ֆուտբոլի 2012-ի Եվրոպայի առաջնության ընտրական մրցաշարը: 4 օր անց մեր ընտրանին կհյուրընկալվի Մակեդոնիայի ֆուտբոլիստներին: Հոկտեմբերի 8-ին եւ 12-ին կայանալիք Հայաստան-Սլովակիա եւ Հայաստան-Անդորրա հանդիպումներով մեր ֆուտբոլիստները կավարտեն այս տարվա համար նախատեսված ընտրական մրցախաղերը:***

**Այսպիսին է Թել Ավիվում կայացած ՈւԵՖԱ-ի 34-րդ համաժողովի ժամանակ կատարված վիճակահանությամբ կազմված խաղացանկը մեր ընտրանու համար: Ինչպես հայտնի է, մարտի 15-16-ին Մոսկվայում կայացած «B» խմբի երկրների ներկայացուցիչների հանդիպման ժամանակ, որում քննարկվել էր խաղացանկը, հենց Հայաստանի պատվիրակների դեմ լինելու պատճառով այն չէր հաստատվել: Իսկ դեմ լինելու հիմնավոր պատճառներ իրոք կային, քանի որ Հայաստանի հավաքականը մրցաշարը սկսելու էր 2 արտագնա հանդիպումներով:**

**Կարծում ենք, որ վիճակահանությամբ կազմված խաղացանկն ընդհանուր առմամբ նպաստավոր է մեր ընտրանու համար եւ հիմնականում արտահայտում է հավաքականի գլխավոր մարզիչ Վարդան Մինասյանի ցանկությունները: Հիշեցնենք, որ նա ցանկանում էր մրցաշարը սկսել սեփական հարկի տակ Սլովակիայի կամ Իռլանդիայի հավաքականների հետ մրցախաղով, այնուհետեւ մեկնել Անդորրա: Ռուսների հետ Մինասյանը ցանկանում էր խաղալ մարտին (այդպես էլ ստացվեց): Այնպես որ խաղացանկից բողոքելու հիմքեր կարծում ենք չկան: Մնում է լավ նախապատրաստվել ընտրական մրցախաղերին: Շատ կարեւոր է հաջող մեկնարկը, ինչը մեծ լիցք կարող է հաղորդել մեր ֆուտբոլիստներին հետագա հանդիպումներում: Ընտրական վերջին մի քանի մրցաշարերում ՀՀ հավաքականի համար հենց մեկնարկն էր չափազանց անհաջող դասավորվում, որից հետո արդեն շատ դժվար էր լինում ուշքի գալ:**

**Այս անգամ կարծես թե ամեն ինչ մեր հավաքականի օգտին է եւ պետք է օգտագործել ստեղծված հնարավորությունները: Նախ Հայաստանի հավաքականին այնքան էլ ուժեղ մրցակիցներ բաժին չեն ընկել եւ հետո մեկնարկային 4 հանդիպումներից երեքը մեր ֆուտբոլիստները անցկացնելու են սեփական հարկի տակ: Ուրեմն հնարավորություն է ստեղծվել արդեն մեկնարկում միավորներ վաստակել ու դնել ապագա հաջողությունների կայուն հիմքը: Այնպես որ այժմ խոսքը մեր ֆուտբոլիստներինն է:**



ՖՈՏՈԼՈՒՐ

**Ընտրական «B» խմբի խաղացանկ**

**2010**
**3 սեպտեմբերի**
Անդորրա-Ռուսաստան
**Հայաստան**-Իռլանդիա
Սլովակիա-Մակեդոնիա
**7 սեպտեմբերի**
Ռուսաստան-Սլովակիա
Իռլանդիա-Անդորրա
Մակեդոնիա-**Հայաստան**
**8 հոկտեմբերի**
Իռլանդիա-Ռուսաստան
**Հայաստան**-Սլովակիա
Անդորրա-Մակեդոնիա
**12 հոկտեմբերի**
Մակեդոնիա-Ռուսաստան
**Հայաստան**-Անդորրա
Սլովակիա-Իռլանդիա
**2011**
**26 մարտի**
Ռուսաստան-**Հայաստան**
Անդորրա-Սլովակիա
Իռլանդիա-Մակեդոնիա
**4 հունիսի**
**Հայաստան**-Ռուսաստան
Սլովակիա-Անդորրա
Մակեդոնիա-Իռլանդիա
**2 սեպտեմբերի**
Ռուսաստան-Մակեդոնիա
Իռլանդիա-Սլովակիա
Անդորրա-**Հայաստան**
**6 սեպտեմբերի**
Ռուսաստան-Իռլանդիա
Սլովակիա-**Հայաստան**
Մակեդոնիա-Անդորրա
**7 հոկտեմբերի**
Սլովակիա-Ռուսաստան
**Հայաստան**-Մակեդոնիա
Անդորրա-Իռլանդիա
**11 հոկտեմբերի**
Ռուսաստան-Անդորրա
Իռլանդիա-**Հայաստան**
Մակեդոնիա-Սլովակիա

# Ակնկալվում է սուր մրցակցություն

«Իմպուլս»-«Ուլիս», «Շիրակ»-«Փյունիկ» հանդիպումներով այսօր մեկնարկում է ֆուտբոլի Հայաստանի բարձրագույն խմբի 19-րդ առաջնությունը: Վաղը տեղի կունենան «Միկա»-«Բանանց» եւ «Կիլիկիա»-«Գանձասար» հանդիպումները: Խաղերի սկիզբը` ժամը 15-ին:

Կարծում ենք ֆուտբոլասերներին այս տարի բավական հետաքրքրական առաջնություն է սպասում: Մեր առաջատար ակումբներն արտերկրում ուսումնամարզական հավաքներ են անցկացրել, լավ համալրում են ստացել: Անշուշտ, այս տարի էլ չեմպիոնի տիտղոսի համար «Փյունիկի» մրցակիցները կլինեն «Միկան», «Ուլիսը» եւ «Բանանցը»: Սակայն մրցանակային տեղերի համար պայքարում չպետք է անտեսել նաեւ Կապանի «Գանձասարին» ու բարձրագույն խմբի նորեկ «Իմպուլսին»: Իսկ ահա «Կիլիկիան» եւ «Շիրակը» ստիպված կլինեն բարձրագույն խմբում տեղը պահպանելու համար դժվարին պայքար մղել մյուս մրցակիցների հետ: Այնպես որ առաջնությունում սուր մրցակցություն է սպասում: Մնում է, որ ֆուտբոլիստները դրսեւորեն իրենց վարպետությունը:

*Էջը պատրաստեց* **ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ**

# Հանրապետականն ու «Հանրապետությունը» կողմ են փոխզիջումներին

Երեկ կայացած ասուլիսների ընթացքում նման դիրքորոշում ներկայացրին **Էդուարդ Շարմազանովը**՝ ՀՀԿ-ից եւ **Սուրեն Սուրենյանցը**՝ «Հանրապետությունից»:

Շարմազանովը, մեկնաբանելով նախագահ Սարգսյանի՝ սիրիական «Ուաթան» թերթին տված հարցազրույցը, որ Հայաստանը ԼՂՀ ներկա կարգավիճակը միջազգայնորեն (եւ Ադրբեջանի կողմից) ընդունվելու եւ Հայաստան-ԼՂՀ ցամաքային սահմանի առկայության պարագայում պատրաստ է Ադրբեջանին զիջել Ղարաբաղի շրջակա որոշ տարածքներ, ասաց. «Չեմ կարծում, որ որեւէ մեկի մեջ պետք է կարծիք առաջանա, որ ինքն ավելի հայրենասեր է, քան Սերժ Սարգսյանը: Եկեք Հռոմի պապից ավելի կաթոլիկ չլինենք եւ մի բան հասկանանք, որ բոլոր խնդիրները պետք է լուծվեն փոխզիջումներով: Բայց այդ փոխզիջումները պետք է ընդունելի լինեն նաեւ ղարաբաղյան կողմի համար»: Հիշեցնենք, որ ղարաբաղյան կողմը բազմիցս է հայտարարել, որ առանց իր մասնակցության չի կարող ընդունվել որեւէ փաստաթուղթ: Այս առումով Շարմազանովը նկատեց, որ ՄԱԿ-ի բանաձեւերով հակամարտության կողմ են ոչ թե Հայաստանն ու Ադրբեջանը, այլ վերջինս ու Ղարաբաղը. «Երեւանն այստեղ ընդամենը ԼՂ-ի անվտանգության երաշխավորն է, բնական է, որ մի օր Ղարաբաղը պետք է դառնա բանակցությունների կողմ», ընդգծեց Շարմազանովը:

Իսկ «Հանրապետություն» կուսակցության քաղաքական խորհրդի անդամ Սուրեն Սուրենյանցը այսպես բնութագրեց իրավիճակը. «Հայաստանը պետք է ոչ թե մերժի մադրիդյան նորացված սկզբունքները, այլ աշխատի դրանք առավել հայանպաստ դարձնելու ուղղությամբ»: Սուրենյանցի համար ակնհայտ է, որ այժմ Հայաստանը վերադարձել է խնդիրը ձգձգելու տակտիկային. «Իսկ սա շատ վտանգավոր է: Խնդիրը պետք է լուծել փոխզիջումների հիման վրա: Ինչքան ժամանակը գնում է, այնքան Հայաստանի համար առավել անբարենպաստ տարբերակներ են շրջանառվում», ասաց Սուրենյանցը:

Ինչ վերաբերում է փոխզիջումներին, ապա, ընդդիմադիր գործչի խոսքերով, դրանք պետք է լինեն բանական, եւ «դրանցից չպետք է նվաստացած դուրս գան ոչ Հայաստանը, ոչ Ղարաբաղը, ոչ էլ Ադրբեջանը». «Ես գերադասում եմ Ղարաբաղի շրջակա տարածքներն անվանել անվտանգության գոտի, եւ ինձ համար պարզ է, որ անվտանգության գոտու որոշ տարածքներ պետք է զիջվեն՝ Ղարաբաղի ժողովրդի անվտանգության եւ Ղարաբաղի հայկականության պահպանման դիմաց, սա անվիճելի է: Բոլոր ազատագրված տարածքները, իհարկե, չենք կարող պահել, բայց, ամեն դեպքում, Ղարաբաղը պետք է ընդհանուր սահման ունենա Հայաստանի հետ», եզրափակեց Սուրեն Սուրենյանցը:

ՀՈՎԻԿ ԱՖՅԱՆ

# 27 կոնգրեսականներ պահանջում են ավելացնել ֆինանսական օգնությունը Հայաստանին եւ Ղարաբաղին

**«Ազատություն» ռադիոկայանի տեղեկացմամբ՝ ամերիկացի 27 կոնգրեսականներ միացել են Ղարաբաղի հետ ուղիղ բանակցություններ սկսելու եւ Հայաստանին ու Ղարաբաղին ֆինանսական օգնությունն ավելացնելու Հայկական հարցերով կոնգրեսական հանձնախմբի համանախագահ Ֆրենկ Փալոնի կոչին: Կոնգրեսականները նամակ են ուղարկել Ներկայացուցիչների պալատի արտաքին հատկացումների ենթահանձնաժողովի նախագահին, որով հորդորում են 2011-ի ֆինանսական տարվա նախնական քննարկումներից առաջ, Հայաստանի եւ Ղարաբաղի հետ հարաբերությունների, ինչպես նաեւ՝ տարածաշրջանային խաղաղության ամրապնդման նպատակով հավելյալ քայլեր ձեռնարկել եւ հաջորդ տարվա հատկացումները կազմելիս իրենց առաջարկությունները հաշվի առնել: Կոնգրեսականների հիմնական պահանջներն են. «2001-ին Հայաստանին հատկացվող ամերիկյան օգնությունը հասցնել 70 մլն դոլարի, Ղարաբաղում հումանիտար ծրագրեր իրականացնելու նպատակով ԱՄՆ-ի Միջազգային զարգացման գործակալությանը տրամադրել հավելյալ 10 մլն դոլար, սահմանափակել ԱՄՆ-ի ֆինանսական հատկացումները Ադրբեջանին՝ պահպանելով Հայաստանին եւ Ադրբեջանին տրամադրվող ռազմական օգնության հավասարությունը, վերացնել Ղարաբաղի եւ ԱՄՆ-ի միջեւ պաշտոնյաների ճամփորդության սահմանափակումները», նամակը ստորագրել են ինչպես դեմոկրատ, այնպես էլ հանրապետական կոնգրեսականներ:**

**2010-ին արտաքին ֆինանսական հատկացումների շրջանակներում Կոնգրեսը Հայաստանին հատկացրել էր 41 մլն դոլար, իսկ Ղարաբաղին՝ 8 մլն: Հիշեցնենք նաեւ, որ Ադրբեջանը բողոքարկել էր Ղարաբաղին հատկացված ոչ թե օգնության չափը, այլ օգնությունն ընդհանրապես:**

Հ. Ա.

# Վարդան Այվազյանին տրված «խիստ նկատողության» պատճառները գաղտնի են

**Երեկ «Ազգ»-ը տեղեկացրել էր, որ հանրապետական գործիչ, ԱԺ պատգամավոր Վարդան Այվազյանին կուսակցությունից տվել են խիստ նկատողություն: Մեր թերթը հիշեցրել էր նաեւ , որ Այվազյանը վերջերս Ծառուկյան-Երիցյան «վեճի» ժամանակ «պաշտպանել» էր ոչ իր համակուսակցին, այլ Գագիկ Ծառուկյանին: Սակայն երեկ Հանրապետական կուսակցության ներկայացուցիչ Էդուարդ Շարմազանովը հերքեց այդ տեղեկությունները, հբր Այվազյանի նկատողությունը որեւէ կապ ունի այս հարցի հետ՝ ասելով. «Այն, թե ինչ է անում կուսակցությունը, չպետք է մանրամասնվի, եւ ոչ ոք չպետք է իմանա մանրամասնությունները. դրանք մեր կուսակցության ներքին խնդիրներն են»:**

Հ. Ա.


## ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ-ի բիզնես ինֆորմացիայի եւ խորհրդատվության բաժինն առաջարկում է կազմակերպել էքսպորտային վարկեր Սլովակիայից Հայաստան եւ ԼՂՀ

Վարկերը երաշխավորվում են Սլովակիայի պետության կողմից.
- հատուկ պտրանքային վարկատեսակ
- կարճաժամկետ, միջին ժամկետի եւ երկարաժամկետ գործարքներ
- ամբողջական կամ մասնակի ֆինանսավորում
- վարկերը տրամադրվում են ցանկացած արտարժույթով:

Այս ծրագրի շրջանակներում հնարավոր է ներկրել Եվրոպական արտադրության որակյալ ծառայություններ եւ ապրանքատեսակներ.
- բժշկական սարքավորումներ,
- գյուղատնտեսական տեխնիկա եւ նյութեր,
- շինարարական տեխնիկա, հումքագծեր եւ նյութեր,
- կենցաղային տեխնիկա,
- տարբեր նշանակության եւ տարողության տրանսպորտային միջոցներ,
- կլիմատիզացիոն համակարգեր,
- սննդամթերք,
- եւ այլն:

Ներկրվող ապրանքների ու ծառայությունների ոլորտների եւ տեսակների սահմանափակում չկա:

Հատուկ բարենպաստ պայմաններով իրականացվում են ՀԷԿ-երի կառուցման, սարքավորումների ներկրման եւ գործարկման աշխատանքները:

Վարկերը տրամադրվում են տարեկան 7-8% տոկոսադրույքով:

Մարման ժամկետը՝ 5-8 տարի:

Մանրամասներին ծանոթանալու համար կարող եք այցելել **www.nt.am** կամ **www.market.nt.am** էլ. կայքերը, գրել մեզ՝ **manush@nt.am** հասցեով, այցելել մեզ՝ Երեւան, Իսահակյան 28, կամ զանգահարել **+37410 56-59-65, 094 366 989** հեռախոսահամարներով:





ACBA-CREDIT AGRICOLE BANK

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿԸ հայտարարում է աճուրդ՝ Բանկի մասնաճյուղերին պատկանող մեքենաների վաճառքի համար: Ցանկացողները կարող են դիմել համապատասխան հեռախոսահամարներով:

**Մակնիշ՝ ՎԱԶ-21213**
Արտադրության տարեթիվ՝ 2000թ.
Կատարված վազք՝ 243,100 կմ
Սկզբնական արժեք՝ 800,000 ՀՀ դրամ
Հեռ.՝ (0222) 3 32 96
*Բանկի «Կոտայք» մասնաճյուղ*

**Մակնիշ՝ ՎԱԶ-21213**
Արտադրության տարեթիվ՝ 2001թ.
Կատարված վազք՝ 208,700 կմ
Սկզբնական արժեք՝ 1,000,000 ՀՀ դրամ
Հեռ.՝ (0224) 2 27 54
*Բանկի «Եղվարդ» մասնաճյուղ*

**Մակնիշ՝ ՎԱԶ-21213**
Արտադրության տարեթիվ՝ 2002թ.
Կատարված վազք՝ 253,324 կմ
Սկզբնական արժեք՝ 1,000,000 ՀՀ դրամ
Հեռ.՝ (0267) 2 40 11, 2 40 12
*Բանկի «Բերդ» մասնաճյուղ*

**Մակնիշ՝ ՎԱԶ-21213**
Արտադրության տարեթիվ՝ 2000թ.
Կատարված վազք՝ 288,400 կմ
Սկզբնական արժեք՝ 1,000,000 ՀՀ դրամ
Հեռ.՝ (0284) 2 40 18, 2 40 94
*Բանկի «Գորիս» մասնաճյուղ*

**Մակնիշ՝ ՎԱԶ-21213**
Արտադրության տարեթիվ՝ 2002թ.
Կատարված վազք՝ 210,000 կմ
Սկզբնական արժեք՝ 700,000 ՀՀ դրամ
Հեռ.՝ (0236) 4 47 66
*Բանկի «Մասիս» մասնաճյուղ*


# Շաբաթական ամփոփ տվյալներ

Մարտի 22-ից 26-ն ընկած ժամանակահատվածում արտարժույթի ներբանկային շուկայում բանկերի կողմից գնվել է 63,697,653 ԱՄՆ դոլար՝ 396.46 դրամ ԱՄՆ մեկ դոլարի դիմաց միջին փոխարժեքով, եւ վաճառվել 60,310,692 ԱՄՆ դոլար՝ 398.43 դրամ ԱՄՆ մեկ դոլարի դիմաց միջին փոխարժեքով:

«ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ» ԲԲԸ-ում նշված ժամանակահատվածում իրականացվել է 16,250,000 ԱՄՆ դոլարի առք եւ վաճառք՝ 393.59 դրամ մեկ ԱՄՆ դոլարի դիմաց միջին փոխարժեքով:

Նույն ժամանակահատվածում միջբանկային շուկայում իրականացվել է 305,000 ԱՄՆ դոլարի առք եւ վաճառք՝ 398.52 դրամ մեկ ԱՄՆ դոլարի դիմաց միջին փոխարժեքով:

Մարտի 15-ից 21-ն ընկած ժամանակահատվածում բանկերի կողմից դրամով տրամադրված վարկերի ծավալը կազմել է 17.9 մլրդ դրամ, իսկ ԱՄՆ դոլարով տրամադրված վարկերի ծավալը՝ 23.8 մլն ԱՄՆ դոլար:

*ԿԲ հասարակայնության հետ կապերի ծառայություն*


**Անիտուր պատմամշակութային զբոսաշրջային գործակալությունը մայիս-հոկտեմբեր ամիսներին կազմակերպում է.**

ANI TOUR

3-օրյա՝ Կարս, Անի, Արդահան, Չլդր լիճ
7-օրյա՝ Պատմական Հայաստանի մայրաքաղաքները Կարս, Անի, Վան, Տիգրանակերտ
10-օրյա՝ Իրան (Թավրիզ, Ուրմիա, Սալմաստ, Թադեի վանք, Մակու)
Արեւմտյան Հայաստան (Վան, Մուշ, Էրզրում, Կարս, Անի, Թբիլիսի)
15-օրյա՝ Արեւմտյան Հայաստան (Կարս, Անի, Վան, Տիգրանակերտ ),Կիլիկիա (Հռոմկլա,Նեմրութ սար,Այնթապ, Մուսա լեռ, Ադանա, Սիս, Անարզաբա, Կոռիկոս, Խարբերդ, Էրզրում), Հալեպ եւ Կիպրոս:
Հատուկ տուր
Վերելք Բիբլիական Արարատի գագաթ /7օր/
Տեղեկությունների համար զանգահարել՝
**Հեռ: 519226, 094203206, 091203206 կամ այցելել**
**Իսահակյան 28,1-ին հարկ սեն. 20**
**www.anitour.org info@anitour.org**


## ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

ՀՀ բնապահպանության նախարարության ՀՀ ջրային օրենսգրքի եւ ՀՀ կառավարության 07.03.03 թ. N 217-Ն եւ N 218-Ն որոշումների պահանջների համաձայն մշակվում է ՀՀ Վայոց Ձորի մարզի Գլաձոր համայնքի վարչական տարածքում գործող **«Մինա-Մայա» ՍՊԸ** կողմից Արփա գետի Եղեգիս վտակի վրա «Եղեգնաձոր» ՓՀԷԿ-ի շահագործման ջրօգտագործման թույլտվության նախագիծը:

Բոլոր շահագրգիռ անձինք, ովքեր կցանկանան ծանոթանալ փաստաթղթի նախագծի նախնական տարբերակին, կարող են աշխատանքային օրերին ժամը 17-18-ը դիմել ՀՀ բնապահպանության նախարարություն (հասցեն՝ Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ):

Հասարակայնության կողմից փաստաթղթի նախնական տարբերակի լսումը տեղի կունենա 2010 թ. մարտի 31-ին, ժամը 16-ին Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ:

*ՀՀ բնապահպանության նախարարություն*

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**Ի գիտություն Երեւան քաղաքի լարային ռադիոցանցի բաժանորդների**

«Հայաստանի հեռուստատեսային եւ ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ-ն տեղեկացնում է, որ Երեւանի լարային վերահաղորդիչ ռադիոցանցից օգտվող բոլոր բաժանորդները, սկսած ս.թ. ապրիլի 1-ից, իրենց աբոնենտային վճարները պետք է կատարեն բացառապես «Հայփոստի» կամ «ՎՏԲ-Հայաստան» բանկի բաժանմունքներում, «Արդշինինվեստբանկ» ՓԲԸ-ի Աղայան մ/ճ, թիվ 2474 6011 7994 0080 հաշվեհամարին:

Կոնտակտային հեռախոս՝ 010 53 44 12

*«ՀՀՌՑ» ՓԲԸ ադմինիստրացիա*


www. azg.am

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60


Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրուած՝ 17.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան՝ 26.03.2010, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Նոյեան Տապան» ՍՊԸ տպարանում՝ Իսահակեան 28: